

ԱՐԾՐՈՒՆԻ ԵՐՋԱՆԻԿԻ ԹՈՐՈՍՅԱՆ



ՀՀ ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ  
ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Ը.00.01- «Տեսական տնտեսագիտություն» և Ը.00.02- «Տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտություններով տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,  
տնտեսագիտության դոկտոր,  
պրոֆեսոր Գ. Ա. Ղարիբյան

տնտեսագիտության դոկտոր,  
պրոֆեսոր Մ. Տ. Սարգսյան

տնտեսագիտության դոկտոր,  
պրոֆեսոր Հ. Ա. Մարգարյան

Առաջատար կազմակերպություն՝

ԲՄԿ ՊՈՒՀ Հայ-Ռուսական  
(Սլավոնական) համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2013 թվականի ապրիլի 11-ին ժամը 14<sup>00</sup>-ին Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող ՀՀ ԲՈՂ-ի տնտեսագիտության թիվ 014 մասնագիտական խորհրդում:

Հասցե՝ 0025, ք. Երևան, Նալբանդյան 128:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրը առաքված է 2013 թ. մարտի 7-ին:

014 մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար,  
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր



Ա. Լ. Ասլանյան

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Հետազոտության թեմայի արդիականությունը:** Հայաստանի Հանրապետությունում սոցիալ-տնտեսական արձագանքային վերափոխումների պայմաններում առաջնահերթ նշանակություն է ստանում մարդկանց կենսամակարդակի բարձրացումը:

Շուկայական տնտեսության պայմաններում բարիքների և ծախայությունների ձեռքբերման հնարավորությունները, նախևառաջ, որոշվում են բնակչության դասակարգմանը: Սակայն դրանց ձևավորման և օգտագործման մեխանիզմում նույնպես տեղի են ունենում փոփոխություններ, որոնք կրում են շուկայական բնույթ, որն էլ կանխորոշում է դրանց խոր ուսումնասիրության անհրաժեշտությունը:

Հայաստանի Հանրապետությունում անցման շրջանին բնորոշ բացասական գործընթացները, ցավոք, չհրջանցեցին բնակչության կենսամակարդակի ոլորտը ևս:

Անցած երկու տասնամյակում տեղի ունեցավ ՀՀ բնակչության դրամական եկամուտների ծայրահեղ բեռնացում, որը խիստ անցանկալի երևույթ է, քանի որ երկրի տնտեսական անվտանգության համար լուրջ սպառնալիք է ներկայացնում:

Ստեղծված իրավիճակում այդ գործընթացները կարգավորելու անհրաժեշտություն է առաջանում, ընդ որում՝ պետության կողմից:

Հայաստանի Հանրապետության սահմանադրությունը, հռչակելով մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները, նախատեսում է. «Յուրաքանչյուր ոք ունի իր և իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի... բարելավման իրավունք: Պետությունն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում քաղաքացիների այս իրավունքի իրականացման համար»<sup>1</sup>: Այդ տեսակետից ՀՀ-ում ներկայումս մշակված հիմնախնդիրների ուսումնասիրությունը դառնում է առավել արդիական:

Զնայած մեծ թվով ուսումնասիրություններին, ՀՀ բնակչության դրամական եկամուտների կարգավորման հիմնախնդիրները լիովին չեն պարզաբանվել և ամբողջական լուծում չեն ստացել:

Մյուս կողմից՝ հանրապետության տնտեսությունում շուկայական վերափոխումները առաջ են բերում բնակչության դրամական եկամուտներին առնչվող նոր հիմնախնդիրներ, որով էլ հիմնավորվում է տվյալ աշխատանքի հրատապությունը:

**Հետազոտության նպատակը և խնդիրները:** Տվյալ հետազոտության նպատակը հասարակության զարգացման ներկա ժամանակաշրջանում բնակչության դրամական եկամուտների շերտավորման պատճառների և միտումների բացահայտումն է ու սոցիալ-տնտեսական քաղաքականության հետագա կատարելագործման պայմաններում դրանց կարգավորման ուղղված տեսամեթոդական ու գործնական մոտեցումների մշակումը: Այդ նպատակի իրականացման համար հետազոտությունում կարևորվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել և համակարգել տնտեսագիտական տարբեր դպրոցների՝ բնակչության եկամուտների երկրի և դրանց ձևավորման վերաբերյալ տեսակետները,
- պարզաբանել և դասակարգել բնակչության եկամուտների ձևավորումը պայմանավորող տնտեսական հարաբերությունները,
- վերլուծել շուկայական վերափոխումների տարիներին ՀՀ տնային տնտեսությունների եկամուտների և ծախսերի կառուցվածքը.

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետության սահմանադրություն (փոփոխություններով), Եր., «Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ, հոդված 34:

- գնահատել ՀՀ բնակչության՝ ըստ դրամական եկամուտների և ծախսերի շերտավորումը և բացահայտել «բևեռացման» պատճառները,
- ուսումնասիրել և գնահատել պետության դերը տարբեր ժամանակահատվածներում բնակչության դրամական եկամուտների կարգավորման գործում,
- հետազոտել տնտեսական աճի ազդեցությունը ՀՀ բնակչության աղքատության մակարդակի վրա և բացահայտել փոքր բիզնեսի զարգացմանը խոչընդոտող գործոնները,
- հիմնավորել ինովացիոն փոքր ձեռնարկությունների գործունեության ակտիվացմանը նպաստող պայմանների ստեղծումը,
- գնահատել չհաշվառվող տնտեսության ծավալը ՀՀ-ում,
- բացահայտել ոչ ֆորմալ զբաղվածության դերը բնակչության դրամական եկամուտների իրական գնահատման գործում,
- ուսումնասիրել ՀՀ բնակչության աշխատանքային միջազգային միգրացիայի հետևանքները և մշակել պետության մասնակցության սկզբունքային մոտեցումները արտագաղթի քաղաքակիրթ ձևերի կազմակերպման համար,
- հետազոտել համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությունը ՀՀ բնակչության (հատկապես աղքատ շերտերի) դրամական եկամուտների վրա,
- քննարկել կենսաթոշակային բարեփոխումների գործընթացին բնորոշ հարցերը ՀՀ-ում,
- բացահայտել կենսաթոշակային բաշխողական համակարգից կուտակայինին անցման հիմնախնդիրները,
- մշակել կենսաթոշակային համակարգի անցման շրջանի հիմնախնդիրների լուծման տարբերակներ՝ հիմնված օրենսդրական փոփոխությունների վրա:

**Հետազոտության առարկան և օբյեկտը:** Հետազոտության առարկան տնտեսության արդիականացման ժամանակակից պայմաններում բնակչության աղքատության կրճատման և եկամուտների աճի վրա ազդող հարաբերությունների ամբողջությունն է և դրանց հետ կապված հիմնախնդիրները:

Հետազոտության օբյեկտը ՀՀ բնակչության դրամական եկամուտներն են և դրանց ձևավորման մեխանիզմները՝ սոցիալական քաղաքականության կատարելագործման պայմաններում:

**Հետազոտության տեսամեթոդաբանական հիմքերը և տեղեկատվության ապահովումը:** Հետազոտության համար տեսամեթոդաբանական հիմք են հանդիսացել ՀՀ սահմանադրությունը, բնակչության դրամական եկամուտների ձևավորումը կարգավորող ՀՀ օրենքները, ՀՀ Կառավարության որոշումները, միջազգային կազմակերպությունների նյութերը, այլ երկրների մեթոդական նյութերը և փորձը, ինչպես նաև հայրենական և արտասահմանյան մասնագետների աշխատությունները:

Հետազոտության տեղեկատվական ապահովման համար օգտագործվել են ՀՀ ազգային վիճակագրական ծառայության (ԱՎՇ) պաշտոնական հրապարակումները, վիճակագրական-վերլուծական զեկուլցները, Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ) վիճակագրական կոմիտեի ժողովածուները, «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի նյութերը:

Հետազոտության ընթացքում կիրառվել են գիտական վերացարկման (աբստրակցիայի), վերլուծության (անալիզի) և համադրության (սինթեզի), կառուցվածքային, գործոնային և համակարգային, ինչպես նաև պատմատրամաբանական վերլուծության մեթոդները:

**Հետազոտության հիմնական արդյունքները և գիտական նորույթը:** Հետազոտության գիտական նորույթը առեմախտությունում առաջարկված բնակչության դրամական եկամուտների կարգավորման այլընտրանքային հայեցակարգն է՝ պայմանավորված հանրապետության ներկայիս սոցիալ-տնտեսական իրավիճակով: Առաջարկված խնդիրների լուծման ընթացքում ստացվել են մի շարք արդյունքներ, որոնցից, մասնավորապես, գիտական նորույթ են հետևյալները.

- ՀՀ տնային տնտեսությունների դրամական եկամուտների կառուցվածքի՝ ըստ դեցիլային խմբերի գնահատումների արդյունքում բացահայտվել է, որ 10% նվազագույն չափով ապահովված շերտերը ուսումնասիրված ժամանակահատվածում ընդգրկվել են ստվերային տնտեսության և աշխատանքի ստվերային վարձատրության մեջ.
- բացահայտելով ՀՀ բնակչության դրամական եկամուտների շերտավորման տարբեր հատկանիշները՝ հիմնավորվել է ըստ տնտեսական գործունեության տեսակների առաջնայնությունը, ինչով էլ պայմանավորված է եկամուտների տարածաշրջանային շերտավորումը՝ կախված դրանցում տնտեսական գործունեության այս կամ այն տեսակի զարգացման աստիճանից.
- առանձին ժամանակահատվածներում պետության կողմից հատկացվող սոցիալական երաշխիքների և աղքատության գծերի դիմամիկայի գնահատման հիման վրա բացահայտվել է, որ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հիմնական հարվածը բաժին է ընկել հանրապետության բնակչության աղքատ շերտերին, ինչի հետևանքով 2009-2010 թթ. ծայրահեղ աղքատների և աղքատների տեսակարար կշիռը աճել է.
- հիմնավորվել է ՀՀ-ում փոքր բիզնեսի հետագա զարգացմանը խոչընդոտող երկու հատկանիշ և՛ տարածաշրջանային տեսանկյունից ոչ համաչափ բաշխվածություն և աշխատանքային ռեսուրսների օգտագործման արդյունավետության ցածր մակարդակ.
- առաջարկվել է չհաշվառվող տնտեսության անուղղակի մակրոտնտեսական գնահատման եղանակ՝ հիմնված առանձին ցուցանիշների համադրման վրա.
- հիմք ընդունելով ՀՀ ԱԿԾ ոչ ֆորմալ զբաղվածությանը վերաբերող ուսումնասիրությունները՝ բացահայտվել է այստեղ ստվերային վարձատրության առկայությունը.
- հիմնավորվել է պետության դերի բարձրացման անհրաժեշտությունը աշխատուժի արտահանման կարգավորման գործում՝ դա դիտարկելով որպես ՀՀ տնտեսական զարգացման կարևոր օղակ.
- բացահայտելով կենսաթոշակների կարևորագույն դերը բնակչության դրամական եկամուտների շերտավորման մեղմման գործում՝ առաջարկվել է բաշխողական համակարգից կուտակայինին անցման երկու սցենար՝ պասիվ և ակտիվ.
- հիմնավորելով ներդրվող կենսաթոշակային համակարգի բացասական հետևանքները, կապված մինչև 1974 թվականը և դրանից հետո ծնված բնակչության դրամական եկամուտների հնարավոր կտրուկ շերտավորման հետ, առաջարկվել է սահմանել ըստ տարիների պրոգնոստիկ աճող սանդղակ՝ պարտադիր կուտակային բաղադրիչին պարտադիր կարգով մասնակիցների համար պետական բյուջեից 0-5%-ի չափով հատկացումներ կատարելու մասին:

**Հետազոտության արդյունքների գիտագործնական և կիրառական նշանակությունը:** Հետազոտության հիմնական դրույթները, 2011-2012 ուսումնական տարվանից սկսած, օգտագործվում են Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի

ուսումնական գործընթացում. դրանք ներառված են «Տնտեսագիտության տեսություն» դասընթացի ծրագրում:

Միգրացիոն քաղաքականության բարեփոխումներին վերաբերող առանձին դրույթներ հավանության են արժանացել և 2012 թ. կիրառվում են ԴՀ տարածքային կառավարման մախարարության միգրացիոն պետական ծառայության կողմից:

Հետազոտության հիմնական արդյունքները կարող են օգտագործվել ԴՀ Կառավարության կողմից սոցիալ-տնտեսական քաղաքականություն մշակելիս: Առանձին դրույթներ կարող են իրենց գործնական կիրառությունը գտնել ԴՀ կենտրոնական բանկի ու ԴՀ աշխատանքի և սոցիալական հարցերի մախարարության կողմից հանրապետությունում կենսաթոշակային բարեփոխումներ իրականացնելիս:

**Հետազոտության փորձարկումը:** Հետազոտության հիմնական դրույթները քննարկվել են ԵժՏԻ-ի և ՀՍՍՀ ՊԱ տնտեսագիտության ինստիտուտի համատեղ ուժերով կազմակերպված՝ երիտասարդ գիտնականների և մասնագետների գիտաժողովում (Երևան, 1987 թ.), ԵժՏԻ-ի պրոֆեսորադասախոսական կազմի և ասպիրանտների գիտական նստաշրջաններում (Երևան, 1988թ., 1990թ.), ինչպես նաև միջազգային գիտական և գիտագործնական գիտաժողովներում. «Современные проблемы инновационного развития Республики Армения и Российской Федерации», (Երևան-Ղոնի-Ռոստով, 2011 թ.), «Актуальные вопросы управления социально-экономическими системами в условиях модернизации», (Սարատով, 2011 թ.), «Достоинный труд-основа стабильного общества» (Եկատերինբուրգ, 2011 թ.):

**Ֆրապարակումները:** Ատենախոսությունում քննարկված հայեցակարգերն իրենց մախնական լուսաբանումն են ստացել հեղինակի մեմագրությունում, ինչպես նաև ԴՀ-ում և արտերկրում հրապարակված գիտական 16 հոդվածներում:

**Հետազոտության կառուցվածքը և ծավալը:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, հինգ գլուխներից, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից, շարադրված է 233 էջի սահմաններում:

## ԱՍԵՆԱԽՍՈՒԹՅԱՆ ԳԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության **ներածությունում** հիմնավորվել է հետազոտության թեմայի արդիականությունը, ձևակերպվել են աշխատանքի նպատակն ու խնդիրները, ներկայացվել են հետազոտության առարկան ու օբյեկտը, տեսամեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, ստացված հիմնական արդյունքները և գիտական նորայթը, ինչպես նաև հետազոտության գիտագործնական նշանակությունը, փորձարկումը ու աշխատանքի կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ «Բնակչության կենսամակարդակի և եկամուտների ուսումնասիրության տեսամեթոդաբանական հիմքերը» զխում պարզաբանվել են կենսամակարդակի գնահատման տեսական հիմքերը, «կենսամակարդակ», «ապրելակերպ», «կյանքի ոճ» և «կյանքի որակ» հասկացությունների տարբերությունները, ինչպես նաև փորձ է արվել համակարգելու բնակչության եկամուտների էության ու դրանց ձևավորման վերաբերյալ հիմնական տեսությունները և ներկայացնելու ժամանակակից հայեցակարգը:

Ֆրանսիացի հեղինակավոր հետազոտող Ա. Դեյանի գրքում անհատի ապրելակերպը, «իր բոլոր շարժառիթներով, պահանջումնըներով, համոզումնըներով և սովորույթներով, դաստիարակությամբ, տարբեր ազդեցությունների ամբողջ համալիրով, որոնց նա փորձել է փորձում է, և որոնք իրենց կնիքն են թողել նրա անհատականության վրա»<sup>2</sup>, համարվել է սպառողական հատվածավորման կարևոր չափանիշ:

Ապրելակերպը համոզե է գալիս ամեն տեսակի խորհրդանիշերի, լեզվական առանձնահատկությունների, կարծիքների և դիրքորոշումների տեսքով: Հատկապես ապրելակերպի միջոցով է անհատը հարմարվում տվյալ պահին հասարակությունում առկա սոցիալ-մշակութային այս կամ այն հոսանքներին:

Ամերիկացի և ֆրանսիացի հետազոտողներն իրենց դիտարկումներում թեև ապրելակերպի համար հիմնականը համարում են կարծիքը, դիրքորոշումը, մախապատվությունը, գործունեությունը և այլն, բայց և այնպես, ըստ ապրելակերպի սպառողներին տարբերակելիս պարտադիր ներառում են նաև անձի եկամուտների մակարդակը: Բոլորը մշում են, որ նույնական եկամուտներով մարդիկ կարող են ունենալ տարբեր ապրելակերպ, սակայն անվերապահորեն առկա է այն ըմբռնումը, որ հատկապես եկամուտների չափն է ապրելակերպի այս կամ այն մակարդակում մարդու գտնվելու և մնալու հնարավորությունների սահմանափակման կարևոր պարամետրը:

Ռուս հեղինակների աշխատություններում, որպես կանոն, «կյանքի ոճ» և «ապրելակերպ» հասկացությունները նույնացվում են: Օրինակ՝ դրանցից մեկում «ապրելակերպ» հասկացությունը ներառում է «ավանդույթները, սովորույթները և մարդկանց վարքագծի կարծրատիպերը»: Իսկ «կյանքի ոճը»՝ գործունեության գերակշռող տեսակը, որը լրացվում է սպառման առարկաներով և արարքներով՝ արտացոլելով անհատի դերը հասարակության մեջ<sup>3</sup>: Ըստ տվյալ մեկնաբանության՝ կյանքի ոճը ապրելակերպի մաս է, և, փաստորեն, գործնականում դրանք տարբերակել հնարավոր չէ: «Կյանքի ոճը» և «ապրելակերպը» միմյանց փոխարինող հասկացություններ են համարվում:

Ըստ Ա. Ա. Ուսայկինի՝ խորհրդային տարիներին «ապրելակերպ» հասկացության գործածության միջոցով փորձ էր արվում վերացնելու կենսամակարդակի՝ ռաբաթս սպառ-

<sup>2</sup> Дейян А., Реклама /Пер. с фр. –М.: Прогресс, 1993, стр. 50.

<sup>3</sup> Ств Основы социально-психологической теории /Под ред. Бодалева А. А. и Сухова А. Н. –М.: Международная педагогическая академия, 1995, тp 158, 161:

ման ոլորտում հասարակության կենսագործունեության բնութագրիչի բնորոշման թերությունները: Այդ դեպքում «կենսագործունեության որակական կողմը կապում էին «ապրելակերպի», իսկ քանակականը՝ «կենսամակարդակի» հետ...»<sup>4</sup>:

«Կենսամակարդակ» հասկացությունը լրացվում է «կյանքի որակ» հասկացությամբ: Երբեմն կյանքի որակը նույնացվում է կենսամակարդակի հետ, որի ներքո հասկացվում են բնակչության՝ ստացված եկամուտներով ձեռք բերվող բարիքների և ծառայությունների քանակն ու որակը<sup>5</sup>: Սակայն, հեղինակի կարծիքով, «կենսամակարդակ» և «կյանքի որակ» կատեգորիաները իմաստային առումով թեև բավականաչափ մոտ են, այնուամենայնիվ, նույնական չեն: Այսպես՝ կենսամակարդակի աճը կարող է ուղեկցվել կյանքի որակի վատթարացմամբ, օրինակ՝ ստրեսային տարբեր իրավիճակների աճի հետևանքով բնակչության առողջության վատթարացում:

Կյանքի որակը բնութագրվում է սննդի կառուցվածքով, առողջության, կրթության ապահովմամբ, բնակարանային պայմաններով, հոգևոր պահանջմունքների բավարարման միջոցների հասանելիությամբ, երկարատև օգտագործման ապրանքներով, տրանսպորտային սպասարկմամբ, բնապահպանական և ջրեապես անվտանգության վիճակով: Կյանքի որակն այս դեպքում հանդես է գալիս որպես տվյալ հասարակությունում մարդու և հասարակության բարօրության ամփոփ չափանիշ:

Փաստորեն, կյանքի որակի վերլուծությունը մոտ է ՍԼԿ-ի Ձարգացման ծրագրի շրջանակներում իրականացված՝ մարդկային ներուժի զարգացման ինդեքսի ( ՄՆՁԻ՝ The Human Development Index-HDI)<sup>6</sup> հաշվարկներին, որը բնութագրում է երկրի բնակչության եկամուտների մակարդակը, կրթություն ստանալու հնարավորությունները և կյանքի տևողությունը:

Ժամանակակից պայմաններում մասնագետներն առավելապես հակված են այն տեսակետին, որ զնոդունակ վարքագծի բազմազան գործոնները կենտրոնանում են երկու համադրական պարամետրերում՝ կյանքի որակ և կենսամակարդակ: Ըստ այդ չափանիշների՝ անհատական պահանջմունքների ամբողջության հատվածավորմամբ կարելի է բավական հաջող լուծել վերլուծության և կանխատեսման խնդիրները: Այդ դեպքում «կյանքի որակը» համարվում է այնպիսի կատեգորիա, որը ներառում է սպառման մոդելը որոշող սոցիալ-մշակութային գործոնները, իսկ «կենսամակարդակ» կատեգորիան՝ տնտեսական գործոնները, այսինքն՝ այն «տնտեսական վիճակը», որն արտահայտվում է մարդկանց կողմից տարբեր սպառողական հավաքածուների սպառմամբ:

Միաժամանակ, ելնելով սույն աշխատանքում ընդունված հայեցակարգից, ըստ հեղինակի՝ կենսամակարդակն արտացոլում է շուկայական տնտեսության կարևոր բաղադրիչը՝ բնակչության գնողունակությունը: Բնակչության կողմից նյութական, մշակութային և սոցիալական պահանջմունքները բավարարող բարիքների ձեռքբերման հնարավորությունների բնութագիրը հատկապես որոշիչ է դառնում կենսամակարդակի ու սահմանափրության ժամանակ: Իսկ շուկայական տնտեսության պայմաններում բարիքների և ծառայությունների ձեռքբերումը զգալի չափով կախված է մարդու տնտեսական վիճակից: Վերջինը, նախևառաջ, որոշվում է նրա եկամուտների մակարդակով:

Տնտեսագիտական տարբեր դպրոցների՝ բնակչության եկամուտների էության և

<sup>4</sup> Ревайкин А. С., Уровень жизни населения (методология и проблемы регионального исследования). –М.: Наука, 1989, стр. 8.

<sup>5</sup> Стю Основы социально-психологической теории /Под ред. Бодалева А. А. и Сухова А. Н. –М.: Международная педагогическая академия, 1995, էջ 161:

<sup>6</sup> Մի շարք աշխատություններում օգտագործվում է դրա մեկ այլ անվանում՝ նա՝ «մարդու զարգացման ինդեքս»:



դրանց ձևավորման վերաբերյալ մոտեցումները սկզբունքորեն տարբերվում են:

Յեղիմակը, մանրամասն ուսումնասիրելով այդ դարոցների կարևորագույն ներկայացուցիչների տեսակետները, համգել է այն եզրակացության, որ չնայած հայացքների տարբերություններին, տնտեսագիտական դարոցները միասնական են այն հարցում, որ եկամտի յուրաքանչյուր տեսակ պայմանավորված է արտադրության որոշակի գործունով:

Ատենախոսության երկրորդ՝ «ՀՀ բնակչության եկամուտների մակարդակի, շերտավորման և պետական կարգավորման գնահատումը» գլխում իրականացվել է բնակչության եկամուտների և ծախսերի մակարդակի, կառուցվածքի և շերտավորման դինամիկայի վերլուծություն, ինչպես նաև գնահատվել է պետության դերը տարբեր ժամանակահատվածներում բնակչության դրամական եկամուտների կարգավորման գործում:

Բնակչության կենսամակարդակը բնութագրող հիմնական ցուցանիշը տնային տնտեսությունների համախառն եկամուտն է: Այդ ցուցանիշն ընդգրկում է ինչպես բոլոր դրամական մուտքերը, այնպես էլ սեփական արտադրության արդյունքների և այլ անձանցից կամ հարազատներից անվճար ստացված կամ մատուցված ոչ պարենային ապրանքների և ծառայությունների դրամական արտահայտությունը:

Համախառն եկամուտների կառուցվածքում դրամական եկամուտների տեսակարար կշիռը 2004 թվականի 85,7%-ից 2010 թվականին ավելացել է մինչև 91,6%, ինչը վկայում է հանրապետությունում շուկայական հարաբերությունների ձևավորման դրական արդյունքների մասին: Ընդ որում, դա առավել ինտենսիվորեն տեղի է ունեցել 2007-2009 թթ. ընթացքում:

Նշված ժամանակաշրջանում դրական փոփոխություններ են կատարվել բնակչության դրամական եկամուտների մեջ վարձու աշխատանքից եկամուտների բաժնի մեծացման առումով:

Զգալիորեն աճել է պետական թոշակների և նպաստների բաժինը՝ կազմելով բնակչության եկամուտների գրեթե 1/5 մասը: Ընդ որում, այդ գործընթացը առավել ինտենսիվ իրականացվեց գյուղական բնակավայրերի տնային տնտեսություններում, որտեղ այդ ժամանակաշրջանում դրանց տեսակարար կշիռը աճել է 7,1 տոկոսային կետով և 2010 թվականին նրանց եկամուտներում կազմել է 20,0%:

2008-2009 թթ. տնային տնտեսությունների եկամուտների կառուցվածքում տրանսֆերտները դրամական եկամուտներում չորրորդ տեղից տեղափոխվել են երրորդ տեղը, որը տեղի է ունեցել ոչ դրամական եկամուտների նվազման հաշվին: Ընդ որում, դրան չի աճարեց նույնիսկ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը: Ավելին, դրանց տեսակարար կշիռը հանրապետության բնակչության դրամական եկամուտներում 2009 թվականի 8,7%-ից 2010 թվականին աճեց մինչև 11,4%՝ գերազանցելով նույնիսկ 2004 թվականի մակարդակը<sup>7</sup>:

Հաշվի առնելով ՀՀ բնակչության համախառն եկամուտներում դրամական եկամուտների աճող դերը՝ մեծ հետաքրքրություն է ներկայացնում ըստ դեցիլային խմբերի առավել քիչ և առավել շատ ապահովված շերտերի դրամական եկամուտների կառուցվածքի դինամիկայի վերլուծությունը ուսումնասիրվող ժամանակաշրջանում:

<sup>7</sup> Տես Հայաստանի սոցիալական պոտենցիալ և աղքատությունը: Վիճակագրական-վերլուծական զեկույց, եր., 2009, էջ 88-89: Հայաստանի սոցիալական պոտենցիալ և աղքատությունը: Վիճակագրական-վերլուծական զեկույց, եր., 2010, էջ 114-115: Հայաստանի սոցիալական պոտենցիալ և սղքատությունը: Վիճակագրական-վերլուծական զեկույց, եր., 2011, էջ 118-119:

2004-2010 թթ. ԳՖ բնակչության միջին շերտի կենսամակարդակի բարձրացման հիմնական աղբյուր են հանդիսացել աշխատանքային եկամուտները և արտերկրում ապրող հարազատներից ստացվող տրանսֆերտները: Այսինքն՝ դրամական եկամուտների աճի հիմնական գործոններ են հանդիսացել աշխատանքը և աշխատանքային միգրացիան: Ստեղծված սոցիալ-տնտեսական իրադրությունում այդպիսի դինամիկան պետք է համարել օրինաչափ: Այդ տեսանկյունից դժվար է չընդունել այն տնտեսագետների մոտեցումը, ովքեր այդպիսի փոփոխությունները կապում են սոցիալ-տնտեսական պայմանների հետ<sup>8</sup>:

Սակայն, վարվող սոցիալական քաղաքականության արդյունքում, պետական սոցիալական տրանսֆերտների տեսակարար կշիռը 2004 թվականի 23,9%-ից 2010 թվականին իջել է՝ հասնելով մինչև 22,7%-ի<sup>9</sup> :

Պատկերը փոխվում է, երբ դիտարկում ենք ԳՖ բնակչության 10% առավել ապահովված շերտերի դրամական եկամուտների կառուցվածքի դինամիկան: 2004-2010 թթ. բնակչության այդ կատեգորիայի կենսամակարդակի աճի հիմնական աղբյուրը աշխատանքային եկամուտներն են, պետական սոցիալական տրանսֆերտները և արտերկրում ապրող բարեկամներից ստացվող տրանսֆերտները:

Սակայն պատկերը կտրուկ փոխվում է, երբ վերլուծում ենք ԳՖ բնակչության 10% նվազագույն ապահովված շերտերի դրամական եկամուտների կառուցվածքի դինամիկան:

Այսպես՝ աշխատանքային եկամուտների առանց այն էլ փոքր բաժինը նվազել է՝ 2004 թվականի 13%-ից 2010 թվականին հասնելով 11,5%-ի: Աճել են պետական սոցիալական տրանսֆերտները՝ 2004 թվականի 45,7%-ից 2010 թվականին հասնելով 52,2%-ի, արտերկրից բարեկամների տրանսֆերտների բաժինը և, հատկապես, այլ եկամուտները՝ 2004 թվականի 12,5%-ից 2010 թվականին հասնելով 21,1%-ի<sup>10</sup>: Ընդ որում, վերջին փաստը կարծես թե վկայում է բնակչության այդ շերտի՝ դեպի սովետային տնտեսություն և աշխատանքի ստվերային վարձատրություն ակտիվ «հեռանալու» մասին: Այդ տնային տնտեսությունների թվին առաջին հերթին պետք է դասել աղքատության նպաստներ ստացող ընտանիքները, ոչ լրիվ ընտանիքները, կենսաթոշակառուներին, գործազուրկներին, հաշմանդամներին, ուսանողներին, ինչպես նաև չորակավորված կամ ցածր որակավորում ունեցող վարձու աշխատողներին:

Այս կապակցությամբ օրինաչափ է թվում նվազագույն աշխատավարձի առավել արագ աճի տեմպի ապահովումը՝ բնակչության այդ խմբի աշխատանքային եկամուտների մասնաբաժնի մեծացման նպատակով:

Հասարակության՝ հարուստների և աղքատների բևեռացման միտումները 1996-2010 թթ. ատենախոսությունում ներկայացված են Լորենցի կորերի միջոցով:

Ինչպես երևում է գծապատկեր 1-ից, Լորենցի կորի ճկվածությունը 1996 թվականին ցույց է տալիս բնակչության եկամուտների բաշխման անհամաչափության կամ շերտավորման աճը շուկայական բարեփոխումների սկզբնական շրջանում:


Սակայն, շուկայական բարեփոխումների առաջին փուլի ավարտի և ԳՖ տնտեսության կայունացման հետ կապված, 2004 թվականին տեղի է ունենում բնակչության եկա-

<sup>8</sup> Տե՛ս Գ. Ղարիբյան, Ա. Գակոբջանյան, Բնակչության եկամուտների բաշխման և վերաբաշխման հարաբերությունները Հայաստանի Հանրապետության անցումային տնտեսությունում: Եր., ԵՊՀ հրատ., 2011, էջ 39:

<sup>9</sup> Տե՛ս Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը: Վիճակագրական-վերլուծական զեկույց, Եր., 2010, էջ 120-121: Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը: Վիճակագրական-վերլուծական զեկույց, Եր., 2011, էջ 124-126:

<sup>10</sup> Տես նույն տեղը:

մուտների շերտավորման եական բարելավում: Հետագայում այդ դրական միտումը մի փոքր թուլանում է, և 2010 թվականին Լորենցի կորի ճկվածությունը ստանում է առավել սահուն տեսք:



- 1996 թ.
- · - 2004 թ.
- 2010 թ.

**Չճապատկեր 1. Լորենցի կորերը 77-ում՝ 1996 թ., 2004 թ. և 2010 թ.<sup>11</sup>**

Բնակչության կենսամակարդակը բնութագրող մյուս կարևոր ցուցանիշը տնային տնտեսությունների սպառողական ծախսերն են:

Այսպես, եթե 2004 թվականին տնային տնտեսությունների սպառողական ծախսերի 56,1%-ը բաժին է ընկել սննդամթերքին, ապա հետագա տարիներին, դրա չնչին աճից հետո, տեղի է ունենում տեսակարար կշռի աստիճանական իջեցում՝ 2009 թվականին կազմելով 51,1%: Սակայն 2010 թվականին այդ ցուցանիշը մի փոքր վատացել է, որը, ըստ հեղինակի, պայմանավորված է համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով ՀՀ բնակչության բարեկեցության որոշակի վատացման հետ: Դա միանշանակ վկայում է Հայաստանի Հանրապետության բնակչության կենսամակարդակի բարելավման մասին: Ընդ որում, այդ ցուցանիշը առավել բարելավվել է քաղաքային բնակավայրերում՝ 2010 թվականին կազմելով 49,0%: Սա խոսում է հանրապետության քաղաքներում կենսամակարդակի առավել բարձր մակարդակի մասին, որը, ըստ էության, ձեռք է բերվել հիմնականում մայրաքաղաքի բնակչության հաշվին<sup>12</sup>:

<sup>11</sup> Կազմված է ըստ Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2001 (1999,2000): Եր., ՀՀ ԱԿԾ, 2001, էջ 88: Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2009: Եր., ՀՀ ԱԿԾ, 2009, էջ 93: Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2011: Եր., ՀՀ ԱԿԾ, 2011, էջ 109:

<sup>12</sup> Տես Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը: Վիճակագրական-վերլուծական զեկույց, Եր., 2009, էջ 96-97: Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը: Վիճակագրական-վերլուծական զեկույց, Եր., 2010, էջ 124-125: Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը: Վիճակագրական-վերլուծական զեկույց, Եր., 2011, էջ 128-129:

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նյութերի համաձայն՝ 2010 թվականին Հայաստանի տնային տնտեսությունների 90%-ի դեպքում միջին ամսական սպառողական ծախսերի կառուցվածքում 50%-ից ավելին բաժին է ընկել սննդամթերքին<sup>13</sup>:

Տնային տնտեսությունների սպառողական ծախսերի կառուցվածքում աճել է ոչ պարենային ապրանքների և ծառայությունների բաժինը, ընդ որում, վերջինս աճել է ավելի մեծ չափով: Հետաքրքիր է, որ ոչ պարենային ապրանքների բաժինը ավանդաբար բարձր է հանրապետության գյուղական վայրերում: Առավել արագ են աճել բնակ-կոմունալ, տրանսպորտի և կապի ծախսերը, այդ թվում և գյուղական բնակավայրերում:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում այդ ժամանակաշրջանում սպառողական ծախսերի կառուցվածքի դինամիկան՝ ըստ բնակչության դեցիլային խմբերի: Առավել քիչ ապահովված ընտանիքները այդ նպատակին են ուղղում սպառողական ծախսերի գրեթե 2/3 մասը:

Բացառություն են կազմում միայն բնակչության առավել ապահովված շերտերը, որոնց շրջանում սննդի ձեռքբերման նպատակով կատարված ծախսերը կազմում են սպառողական ծախսերի 1/3 մասից ոչ շատ ավելի: Այդ խումբը գրեթե այդքան էլ ծախսում է մատուցված ծառայությունների դիմաց<sup>14</sup>:

Ձինիի գործակիցը, հաշվարկված որպես եկամուտների խտացման ինդեքս, 2004 թվականին եղել է բավականին բարձր և կազմել 0,395: 2005 թվականին այդ ցուցանիշը բարելավվել է, սակայն 2006-2007 թթ. աճել՝ վկայելով հանրապետությունում եկամուտների անհավասարաչափ բաշխման խորացման մասին: Միայն 2008 թվականին հաջողվեց կանգնեցնել այդ գործընթացը: Սակայն 2009-2010 թվականներին եկամուտների անհավասարաչափ բաշխման խորացման գործընթացը վերսկսվեց՝ հասնելով և այնուհետև գերազանցելով 2005 թվականի մակարդակը, 2010 թվականին կազմելով 0,362:

Նույն նկարագրով է փոխվել Ձինիի գործակիցը ըստ սպառման, միայն այն տարբերությամբ, որ անհավասարաչափ բաշխման այդպիսի սրություն այստեղ չի նկատվել<sup>15</sup>:

Եկամուտների շերտավորման և սպառման մակարդակի մասին առավել լրիվ պատկերացում է տալիս բնակչության «բևեռային» խմբերի հարաբերակցության գործակիցը:

ՀՀ-ում եկամուտների բաշխման անհավասարաչափությունն ավելի խորն է, քան սպառմանը, որի մասին է վկայում նաև Ձինիի գործակիցը:

Այսպես, եթե դրամական եկամուտների հարաբերակցության գործակիցը, ըստ բնակչության քվինտիլային խմբերի, 2004 թվականին կազմել է 10,6 անգամ, իսկ 2010 թվականին՝ 8,0 անգամ, ապա, ըստ դեցիլային խմբերի, համապատասխանաբար՝ 20,8 և 14,2 անգամ: Նույնն է պատկերը նաև սպառողական ծախսերի գործակիցների համադրության դեպքում<sup>16</sup>: Այդ փաստը մեկ անգամ ևս վկայում է հանրապետությունում բնակչության առավել հարուստների և առավել աղքատների խորը բևեռացման մասին:

Այսպիսով՝ ՀՀ բնակչության եկամուտների և ծախսերի կատարված վերլուծությունը վկայում է այդ հիմնախնդրի կարգավորման պետական մասնակցության անհրաժեշտության մասին:

<sup>13</sup> Տես Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը: Վիճակագրական-վերլուծական զեկույց, Եր., 2011, էջ 132-133:

<sup>14</sup> Տես նույն տեղը:

<sup>15</sup> Տես Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը: Վիճակագրական-վերլուծական զեկույց, Եր., 2009, էջ 52: Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը: Վիճակագրական-վերլուծական զեկույց, Եր., 2011, էջ 58:

<sup>16</sup> Տես Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը: Վիճակագրական-վերլուծական զեկույց, Եր., 2011, էջ 131:

Այդուսակ 1-ի տվյալները վկայում են այն մասին, որ Հայաստանի Հանրապետության մեջ շուկայական վերափոխումների արդյունքում բնակչության դրամական եկամուտների ձևավորման մեջ տեղի են ունեցել էական փոփոխություններ: Այսպես՝ բնակչության դրամական եկամուտներում էականորեն աճել է աշխատանքի վարձատրության տեսակարար կշիռը՝ 1996 թվականի 23%-ից 2010 թվականին հասնելով 60,0%-ի: Դրա հետ միաժամանակ աճել է սոցիալական տրանսֆերտների բաժինը՝ 1996 թվականի 7%-ից 2010 թվականին հասնելով 18,7%-ի:

Բնակչության դրամական եկամուտների ձևավորման կառուցվածքում աշխատանքի վարձատրության բաժինը (ներառյալ թաքնված աշխատավարձը) զգալի է: Այսպես այն կայուն չէ, և վերջին երեք տարիներին հաջորդաբար նվազում է՝ 2007 թվականի 65,2%-ից 2008 թվականին իջնելով 62,8%-ի, 2009 թվականին՝ 60,1%-ի, իսկ 2010 թվականին արդեն կազմելով 60,0%: Երկրորդ տեղը է, այդ փոփոխությունները որոշ չափով բացատրվում են ՀՀ տնտեսության վրա համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությամբ: Դրա հետևանքով տեղի ունեցավ աշխատանքի վարձատրության դիրքերի զիջում՝ հոգուտ սոցիալական տրանսֆերտների տեսակարար կշիռի աճի: Այսպես, 2010 թվականին, նախաճգնաժամային տարվա՝ 2007-ի համեմատությամբ, աշխատանքի վարձատրության տեսակարար կշիռը նվազեց 5,2 տոկոսային կետով, իսկ սոցիալական տրանսֆերտներին՝ աճեց 5,0 տոկոսային կետով:

Այդուսակ 1

**ՀՀ բնակչության դրամական եկամուտների կառուցվածքը 1996-2010 թթ.(%)<sup>77</sup>**

Բնակչության եկամուտներ	Տարիներ							
	1996	2004	2005	2006	2007	2008	2009	2010
Ընդամենը, այդ թվում՝	100	100	100	100	100	100	100	100
1. Աշխատանքի վարձատրություն	23	56,5	60,7	61,9	65,2	62,8	60,1	60,0
2. Սոցիալական տրանսֆերտներ	7	13,6	14,1	13,9	13,7	18,1	20,0	18,7
3. Եկամուտներ բոլոր տեսակի վաճառքներից	28	11,3	10,3	9,9	7,3	6,8	6,1	3,7
4. Այլ դրամական մուտքեր	42	18,6	14,9	14,3	13,8	12,3	13,8	17,6

Նշված բացասական դրսևորումներն ուղեկցվում են Հայաստանի Հանրապետության մեջ ՀՆԱ-ի մեջ աշխատանքի վարձատրության առանց այն էլ ցածր բաժնի համապատասխան կրճատմամբ: Այսպես, եթե ՀՀ ՀՆԱ-ի մեջ աշխատանքի վարձատրության բաժինը 1996 թվականին կազմել է 40%, ապա 2004 թվականին՝ 39,5%, 2005 թվականին՝

<sup>77</sup> Կազմված է ըստ՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2008: Եր., ՀՀ ԱԿԾ, 2008, էջ 90: Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2010: Եր., ՀՀ ԱԿԾ, 2010, էջ 106: Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2011: Եր., ՀՀ ԱԿԾ, 2011, էջ 106:

39,4%, 2006 թվականին՝ 39,0%, 2007 թվականին՝ 38,2%, իսկ 2008-ին արդեն՝ 37,2%: Միայն 2009 թվականին հնարավոր դարձավ կանխել այդ բացասական գործընթացը. աշխատանքի վարձատրության մասնաբաժինը հասցվեց 38,4%-ի<sup>18</sup>: Համեմատության համար նշենք, որ Եվրոմիության երկրներում, ԱՄՆ-ում և ճապոնիայում ՀՆԱ-ի մեջ աշխատանքի վարձատրության բաժինը կազմում է համապատասխանաբար՝ 68,9%, 72,0% և 75,9%<sup>19</sup>:

Միջին ամսական անվանական աշխատավարձը, ըստ ՀՀ տնտեսական գործունեության տեսակների, խիստ տարբեր է:

Այսպես՝ 2004 թվականին միջին ամսական անվանական աշխատավարձը ֆինանսական գործունեության ոլորտում 3,5 անգամ գերազանցել է հանրապետությունում միջին ամսական անվանական աշխատավարձը ամբողջությամբ վերցրած, այն դեպքում, երբ առողջապահության և սոցիալական ծառայությունների մատուցման ոլորտում այն կազմել է 45,5%: Ավելին, միջին ամսական անվանական աշխատավարձը ֆինանսական գործունեության ոլորտում 7,7 անգամ գերազանցել է առողջապահության և սոցիալական ծառայությունների մատուցման ոլորտի միջին ամսական անվանական աշխատավարձը, որը վկայում է ըստ տնտեսական գործունեության տեսակների աշխատավարձի շատ խորը շերտավորման մասին: Սակայն 2010 թվականին այդ ճեղքվածքը փոքրացել է՝ կազմելով 4,2 անգամ: Այս փաստը վկայում է աշխատավարձի պետական կարգավորման դրական տեղաշարժերի մասին: Սակայն 2010 թվականին, 2009 թվականի համեմատությամբ, ճեղքվածքը մեծացել է հանքագործական արդյունաբերության և կոնոնկա, սոցիալական ու անհատական ծառայությունների մատուցման ոլորտների միջին ամսական անվանական աշխատավարձերի միջև՝ 2,7-ից 3,3 անգամ:

Նույնը չի կարելի ասել ձկնորսության և ձկնաբուծության ոլորտում միջին ամսական անվանական աշխատավարձի մասին: Այստեղ, թեև 2004-2009 թթ. միջին ամսական անվանական աշխատավարձը կրկնակի աճել է, թայց և այնպես դրա մակարդակը 2009 թվականին կազմել է հանրապետության ընդհանուր տնտեսության միջին ամսական անվանական աշխատավարձի ընդամենը 66,5%-ը, իսկ 2010 թվականին՝ նույնիսկ 51,3%-ը: Արդյունքում՝ այդ ոլորտում միջին ամսական անվանական աշխատավարձը ներկայումս ամենացածրն է: Հեղինակի կարծիքով, այդ իրավիճակը վկայում է այստեղ ստվերային տնտեսության աճի և թաքցնված աշխատավարձի առկայության մասին<sup>20</sup>:

Անվանական աշխատավարձը տատանվում է նաև տարածքային առումով: Առավել բարձր աշխատավարձի մակարդակ ձևավորվել է Երևան քաղաքում և Սյունիքի մարզում, որը օրինաչափ է, քանի որ ֆինանսական գործունեությունը և խոշոր բիզնեսը հիմնականում կենտրոնացված են մայրաքաղաքում: Ինչ վերաբերում է Սյունիքի մարզին, ապա այստեղ գործում են հանքային արդյունաբերության խոշոր ձեռնարկություններ, որն էլ ապահովում է միջին ամսական անվանական աշխատավարձի բարձր մակարդակ մարզում ամբողջությամբ վերցրած:

Ամենացածր միջին ամսական անվանական աշխատավարձի մակարդակ ձևավորվել է 2004 թվականին և մինչև օրս պահպանվում է Վայոց ձորի և Տավուշի մարզերում,

<sup>18</sup> Հաշվարկված է ըստ Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2001 (1997, 1998): Եր., ՀՀ ԱԿԾ, 2001, էջ 190: Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2008: Եր., ՀՀ ԱԿԾ, 2008, էջ 212: Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2010: Եր., ՀՀ ԱԿԾ, 2010, էջ 235: Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2011: Եր., ՀՀ ԱԿԾ, 2011, էջ 236:

<sup>19</sup> Տե՛ս Львов Д. С., Экономика развития. -М.: Экзамен, 2002, էջ 299:

<sup>20</sup> Հաշվարկված է ըստ Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2009: Եր., ՀՀ ԱԿԾ, 2009, էջ 74: Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2010: Եր., ՀՀ ԱԿԾ, 2010, էջ 90: Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2011: Եր., ՀՀ ԱԿԾ, 2011, էջ 90:

որտեղ գործունեության հիմնական ոլորտը գյուղատնտեսությունն է: Այլ կերպ ասած՝ աշխատավարձի շերտավորումը հիմնականում պայմանավորված է տնտեսական գործունեության տեսակներով, ինչն էլ իր ազդեցությունն է թողնում աշխատավարձի շերտավորման՝ տարածքային առումով ուսումնասիրման վրա<sup>21</sup>:

Շուկայական տնտեսությունում, հատկապես դրա ոչ կայուն զարգացման պայմաններում, մեծ տեղ է տրվում բնակչության եկամուտների մակարդակի կարգավորման բնագավառում պետության սոցիալական երաշխիքներին: Դա, մասնավորապես, վերաբերում է նվազագույն աշխատավարձի սահմանմանը, որը գործում լծակ է հանրապետության տնտեսությունում աշխատանքի վարձատրության կարգավորման համար: Այդ տեսանկյունից առանձնապես կարևոր նշանակություն է ստանում սահմանված նվազագույն աշխատավարձի և սպառողական զամբյուղի միջև հարաբերակցության դինամիկայի ուսումնասիրությունը:

Ինչպես երևում է աղյուսակ 2-ի տվյալներից, 2004-2010 թվականներին աշխատավարձի սահմանված նվազագույն մեծությունը ծածկում է միայն ծայրահեղ (պարենային) աղքատության գիծը, բացառությամբ 2005 թվականի, երբ աշխատավարձի նվազագույն մեծությունը մնացել է 2004 թվականի մակարդակին, իսկ ծայրահեղ (պարենային) աղքատության գիծը արժեզրկման արդյունքում բարձրացել է:

Սակայն նվազագույն աշխատավարձի բարձրացման օգնությամբ աղքատության ընդհանուր գիծը ծածկել է հաջողվեց միայն 2009 թվականին: Դա ձեռք բերվեց այն բանի շնորհիվ, որ աշխատավարձի սահմանված նվազագույն մեծության միջին տարեկան հավելածը գրեթե երկու անգամ գերազանցեց ծայրահեղ (պարենային) աղքատության գծի և աղքատության ընդհանուր գծի հավելածը, որոնք համապատասխանաբար կազմել են՝ 14,9%, 8,4%, 7,2%: Ավելին, իրական նվազագույն աշխատավարձի միջին տարեկան հավելածը նույն ժամանակաշրջանում կազմել է 14,8%:

Այսպիսով՝ այդ տարիներին, կարծես թե, տեղի է ունեցել 33 բնակչության բարեկեցության էական բարելավում սպառողական գների ինդեքսի միջին տարեկան հավելածի 5,9%-ի պայմաններում:

Ինչ վերաբերում է 2010 թվականին, ապա 2009-ին ձևավորված իրավիճակը՝ արժեզրկման ազդեցությամբ աղքատության ընդհանուր գծի մինչև 29332 դրամ բարձրացման և նվազագույն աշխատավարձի նախկին մակարդակի պահպանման արդյունքում, ծածկման մակարդակը 2009 թվականի 115,9%-ից իջավ մինչև 102,3%-ի:

Սիսժամանակ, ինչպես երևում է աղյուսակ 2-ի տվյալներից, աշխատավարձի սահմանված նվազագույն իրական չափի (հաշվարկված շրջայական եղանակով որոշված սպառողական գների ինդեքսով) միջին տարեկան հավելածը կազմել է 8,6%՝ աշխատավարձի սահմանված նվազագույն մեծության 14,9%-ի և աշխատավարձի սահմանված նվազագույն իրական մեծության 14,8%-ի նկատմամբ: Դետեկտար՝ նվազագույն աշխատավարձի իրական միջին տարեկան հավելածի տեմպը 2004-2010 թվականներին գերազանցել է ծայրահեղ (պարենային) աղքատության գծի և աղքատության ընդհանուր գծի միջին տարեկան հավելածի տեմպերը ոչ թե կրկնակի, այլ գրեթե հավասարվել է դրանց:

<sup>21</sup> Հաշվարկված է ըստ՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2007: Եր., 33 ԱԿԾ, 2007, էջ 73: Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2011: Եր., 33 ԱԿԾ, 2011, էջ 90: Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով, 2000-2004: Վիճակագրական ժողովածու: Եր., 2005, էջ 77: Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2011: Վիճակագրական ժողովածու: Եր., 2011, էջ 81:

Ուստի, հանրապետության բնակչության եկամուտների արագ աճի ապահովման համար Կառավարությունը պետք է փնտրի նվազագույն աշխատավարձի հետագա բարձրացման լրացուցիչ ռեսուրսներ: Սակայն 2010թ. դրա մակարդակը մնաց անփոփոխ, իսկ 2011-ին սահմանվեց 32500 դրամ, այսինքն՝ հավելածի միջին տարեկան տեմպը 2009-2011թթ. կազմեց ընդամենը 4,1%: Նվազագույն աշխատավարձի այդ մակարդակը պահպանվել է նաև 2012 թվականին:

2004-2008 թթ. ԳՀ-ում նվազել է ծայրահեղ աղքատների և աղքատների տեսակարար կշիռը: Եթե 2004 թ. հանրապետության բնակչության 41%-ը համարվում էր ծայրահեղ աղքատ և աղքատ, ապա 2008 թվականին այդ ցուցանիշն արդեն կազմում էր 26,6%:

*Սյուրսակ 2*

**Աշխատավարձի սահմանված նվազագույն չափի և աղքատության**

**գծերի դինամիկան 2004-2010 թթ.<sup>22</sup>**

Ցուցանիշների անվանումը	Տարիներ							Անը 2004-2010 թթ. %	Միջին տարեկան հավելումը, %
	2004	2005	2006	2007	2008	2009	2010		
1. Աշխատավարձի սահմանված նվազագույն չափը, ԳՀ դրամ	13000	13000	15000	20000	25000	30000	30000	230,8	14,9
2. Ծայրահեղ (պարենային) աղքատության գիծ, ԳՀ դրամ	12467	13266	14300	15753	17232	17141	20203	162,1	8,4
3. Աղքատության ընդհանուր գիծ, ԳՀ դրամ	19373	20289	21555	23168	25188	25877	29332	151,4	7,2
4. Սպառողական գների ինդեքսը (մախուրդ տարվա նկատմամբ), %	107,0	100,6	102,9	104,4	109,0	103,4	108,2	—	—
5. Աշխատավարձի սահմանված նվազագույն իրական չափը (տող 1/ տող 4), ԳՀ դրամ	12150	12922	14577	19157	18349	29014	27726	228,2	14,8
6. Սպառողական գների ինդեքսը՝ հաշվարկված շրջայական եղանակով, %	100	107,6	110,7	115,6	126,0	130,3	141,0	141,0	5,9
7. Աշխատավարձի սահմանված նվազագույն իրական չափը՝ հաշվարկված շրջայական եղանակով որոշված սպառողական գների ինդեքսով (տող 1/ տող 6 x100), ԳՀ դրամ	13000	12082	13550	17301	19841	23024	21277	163,7	8,6

<sup>22</sup> Հաշվարկված է ըստ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2009: Եր., ԳՀ ԱԿԾ, 2009, էջ 78, 401: Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2010: Եր., ԳՀ ԱԿԾ, 2010, էջ 94, 425: Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը: Վիճակագրական - վերլուծական զեկույց, Եր., 2010, էջ 38: Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2011: Եր., ԳՀ ԱԿԾ, 2011, էջ 94, 420: Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը: Վիճակագրական - վերլուծական զեկույց, Եր., 2011, էջ 38:



Սակայն 2009 թ. նշված ցուցանիշը կազմեց արդեն 33,9%, իսկ 2010 թվականին 34,2%, որը, հեղինակի կարծիքով, հետևանք էր համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցության<sup>23</sup>:

Ընդ որում, ճգնաժամը առավել հարվածեց բաղաբային բնակչությանը (չհաշված երևան քաղաքը) և համեմատաբար քիչ զգացվեց մայրաքաղաքի և գյուղական բնակավայրերի բնակչության վրա, որտեղ կենսամակարդակը համեմատաբար բարձր է: Դեռևս արար՝ հարվածը հատկապես ուժեղ էր հանրապետության առավել աղքատ տարածաշրջաններում:

Ավելին, ֆինանսատնտեսական ճգնաժամի հիմնական հարվածը բաժին է ընկել հանրապետության բնակչության աղքատ շերտերին: Այդ իսկ պատճառով, բնակչության սոցիալական երաշխիքների տրամադրման բնագավառում ԴԴ Կառավարության գործունեությունը վերջին տարիներին, ինչպես նաև մոտ ժամանակներս, պետք է ուղղված լինի բնակչության առավել խոցելի շերտերի կենսամակարդակի բարձրացմանը:

Սակայն ԴԴ բնակչությանը վերջին տարիներին հատկացված հիմնական սոցիալական երաշխիքների վիճակագրական նյութերի վերլուծությունը վկայում է այն մասին, որ ամբողջությամբ չեն լուծվել ճգնաժամի պայմաններում հանրապետությունում առկա սոցիալական խնդիրները:

Այսպես՝ բացի կենսաթոշակի նվազագույն չափից, որի աճի տեմպերը 2010 թ., նախորդ տարիների համեմատությամբ, աճել են, ինչն ամբողջությամբ արդարացված է սոցիալական վարվածության սրացման պայմաններում, պետության սոցիալական երաշխիքների մնացած ուղղություններում տեղի է ունեցել աճի տեմպի նվազում: Ընդ որում, առավելապես նվազել են հասարակության առավել խոցելի շերտերին (գործազուրկներ և աղքատության ընտանեկան նպաստներ ստացող ընտանիքներ) վերաբերող աճի տեմպերը:

Այսպիսով՝ ԴԴ Կառավարության քայլերն այդ բնագավառում հետագա տարիներին, հեղինակի կարծիքով, պետք է ուղղվեն բնակչության ցածր ապահովված շերտերի նկատմամբ վարվող սոցիալական քաղաքականության կուրսի փոփոխմանը:

Ատենախոսության երրորդ «Փոքր բիզնեսի արդիականացումը որպես ԴԴ բնակչության աղքատության կրճատման և եկամուտների աճի կարևորագույն գործոն» զլխում հետազոտվել է տնտեսական աճի ազդեցությունը ԴԴ բնակչության աղքատության մակարդակի վրա, բացահայտվել են ԴԴ-ում փոքր բիզնեսի զարգացմանը խոչընդոտող գործոնները, ինչպես նաև մշակվել են ինովացիոն փոքր ձեռնարկությունների գործունեության ակտիվացման համապատասխան մոտեցումները:

ԴՄ-ի նկատմամբ աղքատության առածգանություն (էլաստիկության) գնահատականների վերլուծությունը ԴԴ-ում միևնչևի համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը և դրա ընթացքում հնարավորություն է տվել հեղինակին եզրակացնելու, որ, անկախ արտաքին գործոններից, Դայաստանի Դանրապետության համար խիստ կարևոր է տնտեսական աճի անշեղ և մշտական ապահովումը: Դակառակ դեպքում առավել արագ տեմպերով ի չիք կդառնան հանրապետության բնակչության աղքատության կրճատման և բարեկեցության բարձրացման ձեռք բերված մակարդակները:

Դայաստանի Դանրապետությունում նշված հիմնախնդրի լուծման համար մեծ նշանակություն է տրվում փոքր բիզնեսի զարգացմանը: Վերլուծության արդյունքները վկայում են այն մասին, որ հանրապետության տնտեսական գործունեության առանձին

<sup>23</sup> Տե՛ս Դայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը: Վիճակագրական-վերլուծական զեկույց, եր., 2010, էջ 38: Դայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը: Վիճակագրական-վերլուծական զեկույց, եր., 2011, էջ 39:

հիմնական տեսակների համար փոքր բիզնեսի դերը ոչ միայն նշանակալի է, այլև ունի աճման միտում: Այսպես՝ 2004-2010 թվականներին արդյունաբերությունում մեծացել է ինչպես փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ) տեսակարար կշիռը և դրանցում աշխատողների մասնաբաժինը, այնպես էլ նրանց կողմից արտադրված արտադրանքի տեսակարար կշիռը:

Նույնը վերաբերում է հանրապետության տրանսպորտին և կապին: Անկախ այն բանից, որ նվազել է փոքր բիզնեսի դերը գյուղատնտեսության և շինարարության ոլորտներում, այնուամենայնիվ, այն շարունակում է կարևոր մնալ համապատասխան արտադրանքի թողարկման և բնակչությանը աշխատատեղերով ապահովելու առումներով: Բացառություն են կազմում միայն կապի ձեռնարկությունները, որտեղ, անկախ փոքր ձեռնարկությունների թվի աճից, կապի ծառայությունների մատուցման գլխավոր դերը պատկանում է խոշոր ձեռնարկություններին: Դա բացատրվում է նոր տեխնոլոգիաների վրա հիմնված կապի ծառայությունների ժամանակակից տեսակների մատուցման իրական հնարավորություններով:

Ժամանակակից շուկայի պայմաններում մանր և միջին ձեռնարկությունների զլխավոր առավելությունը, խոշոր ձեռնարկությունների համեմատությամբ, արագ փոփոխվող պահանջարկի նկատմամբ առավել ճկուն արձագանքն է. ծագող պահանջմունքը «որսալու» կարողությունը և սեփական ռեսուրսների ու հնարավորությունների անմիջական հավաքագրմանը նպաստելը:

Առավելությունների հետ մեկտեղ, փոքր ձեռնարկություններն ունեն խոցելի տեղեր: Դրանցից գլխավորը անհատական կապիտալի փոքր մեծությունն է: Փոքր ձեռնարկությունների գերակշռող մասի համար մեկնարկային կապիտալի կամ բիզնեսում արդեն ներդրված միջոցների համալրման հիմնական աղբյուրը ինքնաֆինանսավորումն է, և միայն գործառնությունների հաջող վարման դեպքում է հնարավորություն ստեղծվում օգտագործելու բանկային վարկը: Սակայն առևտրային բանկերը միշտ չէ, որ պատրաստակամ են համագործակցելու փոքր և միջին ձեռնարկությունների հետ, քանի որ նրանց համար փոքր փոխառությունները պակաս հետաքրքրական են, քան խոշոր ձեռնարկությունների վարկերը, մեծ է նաև ռիսկայնության աստիճանը:

Հայաստանի Հանրապետությունում 2011 թվականի հունվարի 1-ից, համաձայն 2010 թվականի հոկտեմբերի 5-ին ընդունված «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի, փոփոխություն է կատարվել ՓՄՁ դասակարգման մեջ: Հիմնական փոփոխությունները վերաբերում են ՓՄՁ դասակարգման ժամանակ աշխատողների թվի շեմի բարձրացմանը, գնահատման մեկ չափանիշի փոխարեն երկու չափանիշների օգտագործմանը, ինչպես նաև վերացել է ըստ տնտեսական գործունեության ձևերի ՓՄՁ դասակարգումը: ՓՄՁ այդպիսի դասակարգումը, անկասկած, թույլ է տալիս ապահովել դրա զարգացման մակարդակի համադրելիությունը միջազգային մակարդակին: Սակայն, մյուս կողմից, այդ դասակարգումը հաշվի չի առնում արտադրողական ուժերի տեղաբաշխման հայրենական առանձնահատկությունները, փոքր բիզնեսի զարգացման ազգային նպատակաուղղվածությունը, ինչպես նաև ՀՀ-ում շուկայական բարեփոխումների բացասական հետևանքները: Արդյունքում, համաձայն «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի տվյալների, 2009 թվականին ՀՆԱ 42,5%-ը ստեղծվել է փոքր բիզնեսի միջոցով, այն դեպքում, երբ ՓՄՁ դասակարգման չափանիշների խոշորացման հետևանքով դրա բաժինը ՀՆԱ-ում, ներդրմանի հաշվարկների համաձայն, կկրկնապատկվի՝ հասնելով զարգացած երկրների մա-

կարողակին: Սակայն դա դեռևս չի կարող վկայել ՀՀ-ում փոքր բիզնեսի զարգացման բարձր մակարդակի մասին:

ՀՀ-ում, ըստ տնտեսական գործունեության առանձին տեսակների, փոքր բիզնեսի զարգացումը հանգեցրել է դրանց համաչափությանը: Այսպես՝ փոքր բիզնեսը 2004 թվականին թողարկել է արդյունաբերական արտադրանքի 20,2%-ը, իսկ 2010 թվականին՝ 21,8%-ը: Արդյունաբերության ՓԱՉ-ում 2004 թվականին աշխատել է հանրապետության արդյունաբերության ամբողջ ոլորտի աշխատողների 29,3%-ը, 2010 թվականին՝ 31,6%-ը: Նմանափայ մակարդակ է ձևավորվել նաև գյուղատնտեսությունում: Այստեղ 2004 թվականին ՓԱՉ-ը արտադրել են գյուղատնտեսական արտադրանքի 36,4%-ը, 2010 թվականին արդեն՝ 21,4%-ը: Գյուղատնտեսական ՓԱՉ-ում 2004 թվականին աշխատում էր գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղված աշխատողների ընդհանուր թվի 62,6%-ը, իսկ 2010 թվականին՝ 35,1%-ը: Պատկերը նույնն է նաև տրանսպորտի և կապի (բացի բեռնափոխադրումից), ինչպես նաև ծառայությունների ոլորտներում<sup>24</sup>:

ՀՀ-ում փոքր բիզնեսն առավել զարգացում է ապրել միայն մանրածախ առևտրի շրջանառության ոլորտում<sup>25</sup>:

Փոքր ձեռնարկությունների սոցիալ-տնտեսական նշանակությունը, ըստ հեղինակի, այն է, որ դրանք լուրջ առավելություններ ունեն ձեռնարկատիրական այլ կառուցվածքների համեմատությամբ: Բացի այդ, փոքր բիզնեսը մեծ նշանակություն ունի աշխատանքի շուկայի զարգացման համար, քանի որ ներկայացնում է դրա ամենաճկուն և ակտիվ հատվածը:

Զբաղվածության ոլորտում փոքր բիզնեսի դրական նշանակությունն արտահայտվում է հետևյալում.

- շատ կարճ ժամանակահատվածում աշխատուժի նկատմամբ ձևավորում է լրացուցիչ պահանջարկ,
- աշխատատեղեր է տրամադրում այն անձանց, ովքեր աշխատաշուկայում ունեն ցածր մրցունակություն (անփորձ երիտասարդներ, բազմազգվակ կանայք, հաշմանդամներ, թոշակառուներ, ցածր որակավորում ունեցող աշխատողներ),
- ստեղծում է զբաղվածության երկրորդական հնարավորություն և ծառայում է որպես գոյատևման լրացուցիչ միջոցների աղբյուր:

Փոքր ձեռնարկության ոչ պակաս կարևոր առավելություններից է նաև այն, որ դրա ընդլայնումը ոչ միայն մեծացնում է հարկման բազան և բյուջեի եկամուտները, այլև փոքրացնում է երկրի բյուջեի վրա սոցիալական ծախսերի ծանրաբեռնվածությունը:

Միաժամանակ, ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, որոշակի անհամասնություններ են առաջացել փոքր ձեռնարկատիրության ճյուղային կառուցվածքում, որտեղ տեղի է ունենում շրջանառության ոլորտի և առևտրային գործունեության ճյուղերի ձեռնարկությունների բացահայտ գերակայություն, տնտեսությունում ամնշաճ է արդյունաբերական, գյուղատնտեսական և հինվացիոն փոքր ձեռնարկությունների տեսակարար կշիռը:

Սակայն աշխատանքային ռեսուրսների օգտագործման արդյունավետության տեսանկյունից ծանրության կենտրոնը շեղվում է ոչ հօգուտ փոքր բիզնեսի: Այսպես՝ աշխա-

<sup>24</sup> Գաղափարված է ըստ՝ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2004 թվականի հունվար-դեկտեմբերին: Տեղեկատվական ամսական զեկույց: Եր., 2005, էջ 29, 35, 45, 50, 53, 56: Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2010 թվականի հունվար-դեկտեմբերին: Տեղեկատվական ամսական զեկույց: Եր., 2011, էջ 17, 24, 31, 34, 38, 42, 202-203:

<sup>25</sup> Տես Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2010 թվականի հունվար-դեկտեմբերին: Տեղեկատվական ամսական զեկույց: Եր., 2011, էջ 196-197:

տանքի արտադրողականությունը հանրապետության խոշոր արդյունաբերական ձեռնարկություններում 65%-ով ավելի բարձր է, քան փոքր և միջին ձեռնարկություններում, իսկ մանրածախ առևտրի շրջանառությունում՝ 155%-ով<sup>26</sup>: Աշխատանքի արդյունավետության այդքան մեծ տարբերությունը, հատկապես վերջինիս դեպքում, որոշ իմաստով բացատրվում է փոքր և միջին ձեռնարկությունների սովորաբար ավելի քան արհեստագործական մեծ բաժնի առկայությամբ: Առկա են նաև օբյեկտիվ գործոններ՝ պայմանավորված ՓՄՉ ցածր տեխնիկական հագեցվածությամբ, նոր տեխնոլոգիաների բացակայությամբ: Մյուս կողմից՝ ըստ «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի վկայության, ՀՀ-ում 1000 բնակչու հաշվով ՓՄՉ սուբյեկտների քանակը 2009 թվականին 40,9 էր, այն դեպքում, երբ երևանում դրանց թիվը 55,4 էր, իսկ ՀՀ մարզերում՝ 33,3:

Հայաստանի Հանրապետությունն ունի ինովացիոն հզոր հնարավորություններ, և գիտական ոլորտում նախորդ տարիներին ստեղծվել են բոլոր նախադրյալները՝ հատկապես բարձր տեխնոլոգիական արտադրանքի արտադրության ոլորտում մեծ արդյունքների հասնելու համար: Այդ նպատակով անհրաժեշտ է գիտական գաղափարները գործնականում արագ օգտագործելու և միջազգային չափանիշներին համապատասխան նոր արտադրատեսակների սերիական թողարկման հիմքեր ստեղծել:

Հեղինակի կարծիքով՝ առկա իրավիճակի փոփոխության հնարավորություններից մեկը ինովացիոն փոքր ձեռնարկությունների գործունեության ակտիվացման համապատասխան պայմանների ստեղծումը կարող է լինել, որոնց հիմնական բաղադրիչներն են տեխնոլարկերը, բիզնես-ինկուբատորները և վենչուրային հիմնադրամները:

Նման առաջարկը բխում է ՓՄՉ պետական աջակցության հիմնական ուղղություններից, որը ամրագրված է «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքում: Այդ ուղղություններից է «աջակցող ենթակառուցվածքների ստեղծմանը և զարգացմանը նպաստելը»<sup>27</sup>:

Տեխնոպարկը հնարավորություն է տալիս մեկ ամբողջության մեջ միավորելու գիտնականին, տեխնոլոգին, ֆինանսիստին, շուկայագետին և գաղափարը վերածելու մրցունակ արտադրանքի: Այդ նպատակով անհրաժեշտ է համատեղել գիտությունը, կրթությունը և բիզնեսը: Հատկապես տեխնոպարկերն են կոչված գիտական բացահայտումները վերածելու արտադրանքի, ստեղծելու գործնական կապեր և շուկայավարույթյան սկզբունքներ:

Որոշակի գործընթացներ են իրականացվում նաև Հայաստանի Հանրապետությունում: Տարածքային համաչափ զարգացման, փոքր և միջին բիզնեսի խթանման և աշխատատեղերի ստեղծման նպատակով 2008 թվականին ՀՀ Կառավարությունը հանդես եկավ Գյումրին որոշակիորեն վերակառուցելու ծրագրով, որի հիմքում Գյումրու տեխնոպարկի ստեղծումն էր: Դա հնարավորություն կտա աջակցելու փոքր բիզնեսի զարգացմանը, նպաստելու մրցունակ արտադրանքի արտահանմանը: Գյումրիում արդեն իսկ գործում են մի քանի ընկերություններ, այդ թվում՝ համատեղ, ճարտարագիտական լաբորատորիաներ:

Գյումրու տեխնոպարկի ստեղծման հայեցակարգը հաշվի է առնում նաև այս տարածաշրջանի առանձնահատկությունները: Այն նախատեսում է ոսկեգործության, դիզայ-

<sup>26</sup> Հաշվարկված է ըստ՝ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2010 թվականի հունվար-դեկտեմբերին: Տեղեկատվական ամսական զեկույց: Եր., 2011, էջ 17, 196-197:

<sup>27</sup> Տես «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենք, ընդունված է 05.12.2000 թ., ՀՕ-121, հոդված 3:

նի և նորածնության կենտրոնի ստեղծում մարզի գիտաարտադրական ներուժի զարգացման նպատակով<sup>28</sup>:

Գյումրու տեխնոպարկի գործունեության ծրագրի իրականացման նպատակով 2009-2012 թթ. ՀՀ պետական բյուջեյից ֆինանսավորումը կազմել է շուրջ 619500,0 հազ. դրամ:

Փոքր ձեռնարկությունների մասնաբաժնի ավելացման մյուս ուղղությունը բիզնես-ինկուբավորումն է, որը աշխարհում ձեռնարկատիրական գործունեության ոլորտում արդեն իրողություն է:

Հայտնի է, որ բիզնես-ինկուբավորումն ապահովում է ոչ միայն ուղղակի օգուտներ: Բնակչության զբաղվածության, եկամուտների աճի, հարկման բազայի ընդլայնման, ներդրումների հոսքի հետ միասին բիզնես-ինկուբատորները ստեղծում են ենթակառուցվածքի նախնինում ամբավարար բաղադրիչներ՝ խթանելով շրջակա տարածաշրջաններում լրացուցիչ աշխատատեղերի ստեղծումը և այլն:

Հայտնի է, որ ինովացիոն փոքր ձեռնարկությունների գործունեության ֆինանսավորումն ուղեկցվում է ներդրողների համար մեծ ռիսկայնությամբ: Այդ ռիսկի որոշակի նվազեցում կարող են ապահովել վենչուրային ձեռնարկությունների ծրագրերը և մեխանիզմները, մի բան, որ, ցավոք, կիրառություն չի ստացել մեր հանրապետությունում: Վենչուրային վարկավորման իմաստը շատ պարզ է. նվազեցնել ներդրումների ռիսկը: Հանրապետությունում փոքր բիզնեսի աջակցման այդ նոր ուղղության զարգացման համար օրինաչափ է «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի միջոցով միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների ներգրավումը:

Առենախոսության չորրորդ՝ «ՀՀ բնակչության աղքատության կրճատման կազմակերպամեթոդական ուղիները» գլխում փորձ է արվել գնահատելու չհաշվառվող տնտեսության ծավալները ՀՀ-ում և հետազոտելու ոչ ֆորմալ զբաղվածության դերը բնակչության դրամական եկամուտների իրական գնահատման գործում, ինչպես նաև ուսումնասիրելու ՀՀ բնակչության աշխատանքային միջազգային միգրացիայի հետևանքները և մշակելու պետության մասնակցության սկզբունքային մոտեցումներ արտագաղթի քաղաքակիրթ ձևերի կազմակերպման նպատակով:

ՀՀ տնտեսական աճի ճիշտ գնահատումը մեծ չափով կանխորոշվում է տնտեսությունում հաշվառման և հաշվետվությունների վիճակով:

Համաձայն ՀՀ ԱՎԾ-ի՝ տնտեսության «չհաշվառվող» մասի տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ, ըստ տարիների, կազմել է 30-40 տոկոս<sup>29</sup>: Ընդ որում, այդ ճշգրտումները կատարվում են ինչպես ՀՆԱ արտադրության, այնպես և դրա կազմի ցուցանիշների համար: Հարցն այն է, թե որքանով են հիմնավոր «ստվերային», «ոչ ֆորմալ», «թաքնված» տնտեսության արտադրանքի արժեքի քանակական գնահատման մեթոդները, ճշգրիտ՝ դրանց արտադրությունում զբաղված աշխատողների թիվը, եկամուտները և, նախևառաջ՝ աշխատանքի վարձատրությունը: Այդ ցուցանիշների ոչ հավաստի հաշվառումն էլ հենց խեղաթյուրում է բնակչության կենսամակարդակի գնահատականը, խոչընդոտում է դրա դիմամիկայի գիտական վերլուծությանը, հետևաբար և կենսամակարդակի բարձրացման ուղիների որոշմանը, հանրապետության բնակչության եկամուտների աճի պետական քաղաքականության մշակմանը:

<sup>28</sup> Տես Գյումրու տեխնոպարկի գործունեության իրականացման 2012 թվականի ծրագիրը հաստատելու մասին ՀՀ կառավարության 05.04.2012 թվականի № 450-Ն որոշում, հավելված 1, կ.11:

<sup>29</sup> Տես Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 1999 թվականի հունվար-դեկտեմբերին: Տեղեկատվական ամսական զեկույց: Եր., 2000, էջ 13:

Այս առումով, աշխատանքում փորձ է արվել հաշվարկել ԳՀ չհաշվառվող տնտեսության մակարդակը: Խոշորացված մակրոտնտեսական հաշվարկների էությունը հանգում է հետևյալին:

Հասկանալի է՝ ստվերային, թաքնված տնտեսության նպատակը ձեռնարկատիրական լրացուցիչ շահույթի ստացումն է այնպիսի ծախսերից խուսափելու հաշվին, ինչպիսիք են հարկերը, աշխատողների սոցիալական ապահովագրության հատկացումները և այլն: Դետևաբար՝ պաշտոնապես ստացված շահույթը, որպես կազմակերպությունների գործունեության ֆինանսական արդյունքների գնահատական, պետք է համադրվի ազգային հաշիվների «եկամուտների ձևավորման հաշվի» համապատասխան ցուցանիշների հետ:

Այդ ցուցանիշների համադրման խոչընդոտների հաղթահարման միջոցով հաջողվել է որոշել չհաշվառվող տնտեսության ծավալը ԳՀ -ում:

Ընդ որում, հարկ է նշել, որ չհաշվառվող տնտեսությունը առավել լայն հասկացություն է, քան ստվերայինը: Չհաշվառվող տնտեսությունը տրոհվում է հետևյալ խմբերի<sup>30</sup>.

1. ստվերային արտադրություն,
2. ապօրինի արտադրություն,
3. ոչ ֆորմալ հատվածի արտադրություն,
4. տնային տնտեսությունների կողմից արտադրանքի արտադրություն, որը նախատեսված է սեփական վերջնական օգտագործման համար,
5. տվյալների հավաքագրման ծրագրում թերությունների հետևանքով չհաշվառված արտադրություն:

Նշված 5 խմբի ամբողջությունը կազմում է չհաշվառվող տնտեսությունը, սակայն այդ խմբերը, որպես կանոն, փոխադարձորեն հատվում են: Այսպես՝ ոչ ֆորմալ հատվածում տնտեսավարող տարբերակները կարող են իրականացնել գործունեության այնպիսի տեսակներ, որոնք համարվում են ստվերային կամ չհաշվառվող՝ պայմանավորված տվյալների հավաքագրման ծրագրերում առկա թերություններով:

Խնդիրը մի փոքր այլ է ոչ ֆորմալ զբաղվածության դեպքում, որը «ոչ ֆորմալ աշխատատեղերի հանրագումարն է, անկախ այն հանգամանքից՝ եղել են դրանք ֆորմալ, թե ոչ ֆորմալ հատվածի կազմակերպություններում կամ տնային տնտեսություններում»<sup>31</sup>:

Դետևաբար՝ ԳՀ ԱՎԾ-ն իրականացնում է ոչ ֆորմալ զբաղվածությանը վերաբերող պաշտոնական ուսումնասիրություններ, որոնք չհաշվառվող տնտեսության բաղկացուցիչ մասն են կազմում: Այդ իսկ պատճառով որոշակի հետաքրքրություն է ներկայացնում ԳՀ-ում չհաշվառվող, այդ թվում՝ ստվերային տնտեսության մասի պաշտոնական տվյալների վերլուծությունը:

Ինչպես երևում է աղյուսակ 3-ի տվյալներից, 2008 թվականին ԳՀ տնտեսությունում միայն ոչ ֆորմալ զբաղվածների մակարդակը, պաշտոնական տվյալներով, կազմել է 34,2%, սակայն 2009 թվականին այս ցուցանիշը նվազել է՝ կազմելով 30,1%: Ընդ որում, ոչ ֆորմալ զբաղվածության առավել բարձր մակարդակ է գրանցվել տնտեսական գործունեության այնպիսի տեսակներում, ինչպիսիք են՝ գյուղատնտեսությունը, շինարարությունը, առևտուրը, մեքենաների նորոգումը, հյուրանոցները և ռեստորանները, որը միանգամայն օրինաչափ է: Ավելին՝ առաջին երկուսում 2008-2009 թթ. այդ մակարդակը

<sup>30</sup> Տես Измерение ненаблюдаемй экономики. 2003. Руководство. –М.: 2003, էջ 43-49:

<sup>31</sup> Աշխատանքի շուկան Գայաստանի Հանրապետությունում, 2010: Վիճակագրական ժողովածու: Եր., ԳՀ ԱՎԾ, 2010, էջ 107:

աճել է՝ ամբողջությամբ վերցրած ԳՀ տնտեսության նշված բնագավառում կատարված դրական տեղաշարժերի պայմաններում: Նշանակալի դրական տեղաշարժեր են կատարվել ֆինանսական գործունեության, անշարժ գույքի հետ կապված գործունեության, վարձակալության, սպառողներին ծառայությունների մատուցման, պետական կառավարման, կրթության, առողջապահության, սոցիալական և անհատական ծառայությունների մատուցման տնտեսական գործունեության տեսակներում:

Աղյուսակ 3-ի երկրորդ մասի վերլուծությունից պարզվում է, որ միջին ամսական դրամական եկամուտները ոչ ֆորմալ զբաղվածների շրջանում հանրապետության տնտեսությունում ամբողջությամբ վերցրած մեկ քառորդով ցածր են, քան ֆորմալ զբաղվածների դեպքում է: Ընդ որում, ըստ տնտեսական գործունեության տեսակների, միջին ամսական դրամական եկամուտների շեղումը պետական կառավարման, կրթության, առողջապահության, սոցիալական և անհատական ծառայությունների մատուցման տեսակներում հասնում է 48,7%-ի, շինարարությունում՝ 20,2%-ի, այլ ծառայություններում՝ 35,8%-ի, ֆինանսական գործունեության, անշարժ գույքի հետ կապված գործունեության, վարձակալության և սպառողներին ծառայությունների մատուցման տեսակներում կազմում է 33,4%, արդյունաբերությունում՝ 37,6%: Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում այն հանգամանքը, որ տնտեսական գործունեության ներկայացված 8 տեսակներից 5-ում 2008-2009 թթ. տեղի է ունեցել ոչ ֆորմալ զբաղվածների դրամական եկամուտների հետ մնալու տեսակերի աճ ֆորմալ զբաղվածների դրամական եկամուտների համեմատությամբ:

Չեղարքրել է, որ 2008-2009 թթ. միջին ամսական դրամական եկամուտների եական աճ է տեղի ունեցել միայն ֆինանսական գործունեության, անշարժ գույքի հետ կապված գործունեության, վարձակալության և սպառողներին ծառայությունների մատուցման տեսակներում, որտեղ 2008 թվականին ոչ ֆորմալ զբաղվածների միջին ամսական դրամական եկամուտները պակաս են եղել ավելի քան 2 անգամ:

Ավելին, 2009 թվականին ոչ ֆորմալ զբաղվածների միջին ամսական եկամուտները այլ ծառայություններում նվազել են ոչ միայն հարաբերականորեն, այլև բացարձակ մեծությամբ: Այսպես՝ եթե միջին ամսական դրամական եկամուտներն այստեղ 2008 թվականին կազմել են 52779 դրամ, ապա 2009 թվականին արդեն՝ 47566 դրամ, և դա տեղի է ունեցնում հանրապետությունում ամբողջությամբ վերցրած միջին ամսական դրամական եկամուտների ընդհանուր բարձրացման պայմաններում, այսինքն նվազել է ոչ միայն հարաբերակցության ցուցանիշը, այլև բացարձակ մեծությունը, որն ուղղակի անհեթ է:

Ստացվում է, որ «ստվերում» գտնվող կազմակերպությունները և զբաղվածները, խուսափելով մի շարք հարկերի վճարումից, միևնույն ժամանակ, «ցածր» շահութաբերությունից ելնելով, չեն կարողանում իրենց ապահովել դրամական եկամուտներով, մինչդեռ նրանք հավասար են ֆորմալ զբաղվածներին: Արդյունքում կարելի է համոզվել անորամաբանական հետևության՝ ոչ ֆորմալ զբաղվածները և կազմակերպությունները, որոնք գտնվում են ստվերում, համատարած ցածր շահութաբեր և ավելին՝ վնասով աշխատող են: Իրականում ոչ ֆորմալ զբաղվածությունը ծնել է ստվերային վարձատրություն, որն էլ իր տրամաբանական մարմնավորումն է ստացել ոչ ֆորմալ զբաղվածների ցածր դրամական եկամուտներում: Այդ իսկ պատճառով ԳՀ բնակչության իրական դրամական եկամուտներն ավելի բարձր են, քան սույն աշխատանքի նախորդ գլուխներում հեղինակի կողմից պաշտոնական վիճակագրության տվյալների վերլուծության հիման վրա ստացված արդյունքները: Այդ վնասող թույլ չի տալիս կատարել բնակչության եկամուտների դիմամիկայի հիմնավորված համեմատություն, ինչպես նաև միջազգային համարումներ:

ՀՀ-ում 2008-2009 թթ. ֆորմալ և ոչ ֆորմալ զբաղվածություն ունեցողների դրամական եկամուտների չափը՝ ըստ տնտեսական գործունեության տեսակների<sup>22</sup>

Տնտեսական գործունեության տեսակներ	Զբաղվածներ						Միջին ամսական դրամական եկամուտ					
	2008			2009			2008			2009		
	ֆորմալ, հազ. մարդ	ոչ ֆորմալ, հազ. մարդ	ոչ ֆորմալ զբաղվածների տնտեսական կազմակերպությանը միջինը, %	ֆորմալ, հազ. մարդ	ոչ ֆորմալ, հազ. մարդ	ոչ ֆորմալ զբաղվածների տնտեսական կազմակերպությանը միջինը, %	ֆորմալ զբաղվածների, հազ. մարդ	ոչ ֆորմալ զբաղվածների, հազ. մարդ	ոչ ֆորմալ զբաղվածների և ֆորմալ զբաղվածների հարաբերությունը, %	ֆորմալ զբաղվածների, հազ. մարդ	ոչ ֆորմալ զբաղվածների, հազ. մարդ	ոչ ֆորմալ զբաղվածների և ֆորմալ զբաղվածների հարաբերությունը, %
Ընդամենը	577,8	299,9	34,2	554,9	238,8	30,1	71898	50834	70,7	77502	59417	76,7
1. Գյուղատնտեսություն	9,9	143,5	93,5	6,6	115,4	94,6	54144	36449	67,3	73302	49616	67,7
2. Արդյունաբերություն	108,0	18,8	14,8	94,0	14,6	13,4	74034	57369	77,5	79412	49562	62,4
3. Շինարարություն	46,0	51,4	52,8	32,7	39,7	54,8	84373	72795	86,3	104578	83485	79,8
4. Առևտուր, մեքենաների նորոգում, հյուրանոցներ և ռեստորաններ	71,0	44,9	38,7	66,1	38,3	36,7	80360	63503	79,0	81520	66894	82,1
5. Տրանսպորտ և կապ	48,4	13,0	21,2	50,8	13,0	20,4	77819	77374	99,4	81688	77577	95,0
6. Ֆինանսական գործունեություն, անշարժ գույքի հետ կապված գործունեություն, վարձակալում և սպառողների ծառայությունների մատուցում	26,4	2,4	8,3	21,6	0,8	3,6	118405	57926	48,9	105984	70569	66,6
7. Պետական կառավարում, կրթություն, առողջապահություն, սոցիալական և անհատական ծառայությունների մատուցում	224,1	9,7	4,1	240,5	0,9	0,4	59648	35473	59,5	69256	35506	51,3
8. Այլ ծառայություններ	44,1	16,2	26,9	42,7	16,1	27,4	71982	52779	73,3	74063	47566	64,2

<sup>22</sup> Հաշվարկված է ըստ Աշխատանքի շուկան հայաստանի Հանրապետությունում, 2010: Վիճակագրական ժողովածու: Եր., ՀՀ ԱՎԾ, 2010, էջ 161, 163, 167, 169:



Այսպիսով՝ 33 բնակչության եկամուտների մակարդակի բարձրացման գործուն ռեզերվ է հանդիսանում չհաշվառվող տնտեսության ծավալների նվազեցումը դրա դրսևորման բոլոր ձևերում՝ սկսած սովետայինից, վերջացրած նրանցով, որոնք հետևանք են վիճակագրական տվյալների հավաքագրման ծրագրում առկա թերությունների:

33-ում շուկայական վերափոխումների արդյունքում կենսամակարդակի անկման պատճառով բնակչության միջազգային միգրացիան կտրուկ աճեց:

Հայաստանի Հանրապետությունից արտագաղթողների հիմնական հոսքն ուղղվում է ԱՊՀ երկրներ, հատկապես՝ Ռուսաստանի Դաշնություն: 1995-2010 թվականներին Հայաստանի Հանրապետությունից արտագաղթել է 140100 մարդ, որից 117000-ը (83,5%-ը)՝ ԱՊՀ երկրներ: Այդ ժամանակաշրջանում վերադարձել է 26400 մարդ, այդ թվում ԱՊՀ երկրներից՝ 22200 մարդ (ամբողջի 84,1%-ը): Պաշտոնական վիճակագրության տվյալները վկայում են նաև այն մասին, որ այդ ժամանակաշրջանում արտագաղթածների գերակշռող մասը՝ 81,2%-ը, չի վերադարձել հայրենիք: Սիգրացիայի սալոյդի վերաբերյալ այդ ժամանակաշրջանի տվյալների համաձայն՝ արտագաղթն առավել մեծ չափերի է հասել այն տարիներին, երբ 33-ում կենսամակարդակը ցածր է եղել և զգալիորեն զիջել է ԱՊՀ երկրների միջին մակարդակը, մասնավորապես՝ Ռուսաստանի Դաշնության: Ավելին, այդ տարիներին մեծացել է նաև միգրացիայի բացասական սալոյդի տեսակարար կշիռը արտագաղթածների թվաքանակի նկատմամբ: Այսպես՝ 2000 թվականին դա կազմել է արտագաղթածների 86,7%-ը, 2001 թվականին՝ 86,6%-ը, 2002 թվականին՝ 84,4%-ը<sup>33</sup>:

Ինչպես վկայում են վիճակագրական տվյալները, արժույթի գնողունակության համարժեքությանը հաշվարկված՝ բնակչության մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ մեծությունը ԱՊՀ երկրներում, միջին հաշվով, գերազանցում է այդ ցուցանիշի համաշխարհային մակարդակը: Ընդ որում, ամենաբարձր մակարդակի հասել են Ռուսաստանի Դաշնությունը, Ղազախստանը և Բելառուսը:

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետությանը, ապա այդ ցուցանիշով նա հետ է մնում ԱՊՀ երկրների միջին մակարդակից ավելի քան 2 անգամ: Այս առումով, Հայաստանի Հանրապետությունը գերազանցում է միայն Տաջիկստանին, Ղրղզստանին, Մոլդովային և որոշ չափով՝ Վրաստանին: Ինչ վերաբերում է Ռուսաստանի Դաշնությանը, ապա 33-ն այդ ցուցանիշով նրան զիջում է ավելի քան 3 անգամ<sup>34</sup>: 33-ում, ԱՊՀ երկրների և հատկապես Ռուսաստանի Դաշնության համեմատությամբ, բավականին ցածր կենսամակարդակն է համարվում հանրապետությունից բնակչության զանգվածային և կայուն արտագաղթի տնտեսական հիմքը:

Հայաստանի Հանրապետությունից լայնամասշտաբ արտագաղթի վրա իր ազդեցությունն է ունենում նաև վերջին տասնամյակում բնակչության դրամական եկամուտների համեմատաբար ցածր մակարդակը: Այսպես՝ ինչպես երևում է աղյուսակ 4-ի տվյալներից, հանրապետության բնակչության մեկ շնչին բաժին ընկնող դրամական եկամուտների մակարդակը, ԱՄՆ դոլարով արտահայտված, ավելի քան 4 անգամ ցածր է Ռուսաստանի Դաշնության նույն ցուցանիշից: ԱՊՀ անդամ 7 երկրներից Հայաստանը այդ ցուցանիշով չի զիջում միայն Տաջիկստանին և Ուզբեկստանին: Սակայն, միայն

<sup>33</sup> Տես Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2001 (1997, 1998): Եր., 33 ԱԿԾ, 2001, էջ 36: Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2004: Եր., 33 ԱԿԾ, 2004, էջ 43: Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2009: Եր., 33 ԱԿԾ, 2009, էջ 45: Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2011: Եր., 33 ԱԿԾ, 2011, էջ 45:

<sup>34</sup> Տես Содружество независимых государств в 2010 году ( краткий сборник). –М.: Статкомитет СНГ, 2011, էջ 37-42:

գրանցված գործազրկության մակարդակի ցուցանիշով, այն դեպքում, երբ այդ ոլորտում Հայաստանի Հանրապետությունն ունի ազատական օրենսդրություն, և նույնիսկ բավական խոշորամասշտաբ արտագաղթի պայմաններում, այնուամենայնիվ, հանրապետությունը մշտապես գտնվում է ոչ ցանկալի վիճակում: Այսպես՝ 2000 թվականին, ԱՊԳ երկրների ընդհանուր գործազրկության 2,3%-ի պայմաններում, ԳԳ-ում այն կազմել է 10,7%: Վերջին տասնամյակի հետագա տարիներին այդ ցուցանիշը մի փոքր նվազել է, սակայն 2010 թվականին կազմել է 6,8%, այն դեպքում, երբ ԱՊԳ երկրներում կազմել է 1,8%:

Սակայն բնակչության միգրացիան՝ հստակապես աշխատանքային, պետք է կարգավորվի դոնոր պետությունների կողմից: Այդ ոլորտում ակտիվ պետական քաղաքականությունը թույլ կտա նախանրեն թուլացնել հանրապետությունում գործազրկության լարվածությունը: Աշխատուժի արտահանումը ոչ թե պետք է կրի տարերային, չկարգավորվող բնույթ, այլ պետք է չինի ԳԳ տնտեսական զարգացման կարևոր օղակը՝ ապահովելով երկրից աշխատուժի ելքից կորուստների փոխհատուցումը և ընդունող երկրներում աշխատող միգրանտների իրավունքների պաշտպանությունը:

*Աղյուսակ 4*

*Բնակչության մեկ շնչին բաժին ընկնող դրամական եկամուտների դինամիկան (ԱՄՆ դոլարով) և գրանցված գործազրկության մակարդակը (%) ԱՊԳ երկրներում 2000-2010 թթ.<sup>35</sup>*

Երկրներ	2000	2005	2006	2007	2008	2009	2010
1. Ադրբեջան - եկամուտներ - գործազրկության մակարդակ	495 1,2	1030 1,4	1365 1,3	1970 1,2	– 1,0	– 1,0	– 0,9
2. Հայաստան - եկամուտներ - գործազրկության մակարդակ	335 10,7	783 7,6	979 7,2	1419 6,6	– 6,3	– 7,1	– 6,8
3. Բելառուս - եկամուտներ - գործազրկության մակարդակ	751 2,1	1833 1,5	2271 1,2	2816 1,0	3639 0,8	3233 0,9	2704 0,7
4. Ռուսաստան - եկամուտներ - գործազրկության մակարդակ	903 1,4	3404 2,5	4503 2,3	5840 2,0	7605 2,0	6384 2,8	5243,5 2,1
5. Տաջիկստան - եկամուտներ - գործազրկության մակարդակ	118,2 2,6	128,9 2,1	169,2 2,3	212,1 2,5	257,4 2,1	215,9 2,1	215,9 2,3
6. Ուզբեկստան - եկամուտներ - գործազրկության մակարդակ	– 0,4	269,1 0,3	320,8 0,3	363,3 0,2	– 0,2	– –	– –
7. Ուկրաինա - եկամուտներ - գործազրկության մակարդակ	357,9 5,5	954,9 4,3	1228,3 3,7	1458,8 3,1	1816,3 4,1	– 2,6	– 2,7
Ընդամենը ԱՊԳ-ում գործազրկության մակարդակը	2,3	2,4	2,2	1,9	2,0	2,2	1,8

<sup>35</sup> Կազմված է ըստ՝ Содружество независимых государств в 2010 году ( краткий сборник). –М.: Статкомитет СНГ, 2011, էջ 185, 193:

ՀՀ միգրացիոն քաղաքականությունը պետք է հենվի հետևյալ սկզբունքների վրա.

1. ՀՀ գործազրկության մակարդակի նվազեցում դեպի այն երկրներ աշխատուժի արտահանման հաշվին, որտեղ առկա է համապատասխան պահանջարկ,
2. միգրանտների՝ հայրենիք վերադարձի երաշխիքներ,
3. այն մասնագետների միգրացիայի կանխում, ում նկատմամբ տեղական աշխատաշուկայում առկա է մեծ պահանջարկ,
4. արտասահմանում իրենց որակավորումը բարձրացրած և հայրենիք վերադարձած մասնագետների միջոցով աշխատողների ընդհանուր մասնագիտական մակարդակի բարձրացում,
5. արտաքին դրամական տրանսֆերտների հոսքի հսկողություն:

Գործազրկության մակարդակի իջեցումը նվազեցնում է բյուջեի սոցիալական ծանրաբեռնվածությունը, և ազատված դրամական միջոցները կարող են ուղղվել սոցիալական այլ նպատակների իրականացմանը կամ գործազրկության նպաստների ծավալի մեծացմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը: Սակայն այդ դեպքում անհրաժեշտ է վերահսկել բարձր որակավորված աշխատուժի արտահանումը (արտագաղթը), որը ՀՀ-ում աշխատանքային միգրացիային բնորոշ առանձնահատկություններից է:

Ավելին, աշխատուժի արտահանմանը պետության ակտիվ մասնակցությունը հնարավորություն կտա երաշխավորելու այն միգրանտների վերադարձը, ովքեր բարձրացրել են իրենց որակավորումը արտասահմանում գտնվելու ժամանակահատվածում:

Մյուս կողմից՝ աշխատանքային արտագաղթը, որը հանրապետությունում ձևավորված սոցիալ-տնտեսական վիճակի, գործազրկության բարձր մակարդակի և բնակչության ցածր կենսամակարդակի հետևանք է, վերջինիս վրա թողնում է նաև դրական ազդեցություն: Արտագաղթածների հայրենիք ուղարկած դրամական միջոցների հաշվին բարձրանում է հանրապետության բնակչության կենսամակարդակը՝ մեծացնելով նաև Հայաստանի Հանրապետության վճարային հաշվեկշռում արտարժույթի մուտքերը:

Վիճակագրական տվյալների վերլուծությունից պարզվում է, որ 2004-2009 թթ. Հայաստանից դուրս ապրող բարեկամներից ստացվող տրանսֆերտների տեսակարար կշիռը նվազման միտում է ունեցել՝ կազմելով 2009 թվականին հանրապետության տնային տնտեսությունների դրամական եկամուտների 7,5%-ը: Բացարձակ առումով այն աճել է 884 դրամով, այսինքն՝ 61,8%-ով: Սակայն 2010 թվականին դրա տեսակարար կշիռը շեշտակի աճել է՝ կազմելով տնային տնտեսությունների դրամական եկամուտների 10,0%-ը<sup>36</sup>: ՀՀ տնային տնտեսությունների դրամական եկամուտների կազմում հանրապետությունից դուրս ապրող բարեկամներից ստացվող տրանսֆերտների տեսակարար կշռի այդպիսի աճնախադեպ աճը պայմանավորված էր համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով վերջին տարիներին աղքատության ցուցանիշների վատթարացմամբ և դրամական եկամուտների կարևորագույն աղբյուրի՝ իրական աշխատավարձի աճի տեմպերի նվազմամբ:

Միաժամանակ, ըստ ՀՀ տնային տնտեսությունների դրամական եկամուտների դեցիլային խմբերի, արտաքին տրանսֆերտների կառուցվածքի վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ հատկանիշով ՀՀ տնային տնտեսությունները կարելի է բաժանել երկու մասի. առաջին՝ 1-5 դեցիլային խմբեր, երկրորդ՝ 6-10 դեցիլային խմբեր: Երկու մասերում էլ նկատվում է արտաքին տրանսֆերտների տեսակարար կշռի աճ՝ կախված դեցիլային խմբերի մեծացումից. 2010 թվականին առաջին մասի դեցիլային խմբերում այս

<sup>36</sup> Հաշվարկված է ըստ՝ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը: Վիճակագրական-վերլուծական զեկույց: Եր., 2009, էջ 88: Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը: Վիճակագրական-վերլուծական զեկույց: Եր., 2011, էջ 118, 120-123:

ցուցանիշն աճում է 3,9%-8,5%-ով, իսկ երկրորդում՝ 6,9% - 19,2%-ով: Ընդ որում, այդպիսի միտումը հստակ ձևավորվում է հատկապես 2010 թվականին<sup>37</sup>: Արդյունքում ատենախոսությունում հեղինակը համզում է այն եզրակացության, որ Հայաստանից դուրս ապրող բարեկամներից ստացվող տրանսֆերտները՝ մի կողմից՝ ուղղվելով բնակչության աղքատ շերտերի գոյատևմանը, մյուս կողմից՝ բնակչության հարուստ շերտերի դրամական եկամուտների լրացմանը, չեն նպաստում բնակչության տարբեր շերտերի կենսամակարդակների մոտեցմանը: ՀՀ-ում արտաքին տրանսֆերտներն էլ ավելի են մեծացնում հարուստների և աղքատների կենսամակարդակների միջև ճեղքվածքը, այսինքն՝ խորացնում են բնակչության եկամուտների շերտավորումը: Եվ դա տեղի է ունենում այն պայմաններում, երբ, ինչպես նշվել է, ըստ դրամական եկամուտների 10% ամենաապահով և 10% ամենամասնապահով ՀՀ բնակչության հարաբերակցությունը 2010 թվականին կազմել է 14,2:

Սակայն Հայաստանից դուրս ապրող բարեկամներից ստացվող տրանսֆերտների տեսակարար կշռի դինամիկայում ուսումնասիրվող ժամանակաշրջանում նկատվում են նաև դրական միտումներ: Այսպես, 2004-2010 թթ. (բացառությամբ հետծգնաժամային տարիների) 1-ից 5 և մասնակիորեն՝ նաև 6 դեցիլային խմբերում նկատվում են արտաքին տրանսֆերտների տեսակարար կշռի աճի հստակ միտումներ: Եվ, ընդհակառակը՝ հստակ արտահայտված հակառակ միտում է դիտվում 7 և 10 դեցիլային խմբերում<sup>38</sup>: Այսպիսով՝ եթե բացառվեն հետծգնաժամային տարիները, ապա արտաքին տրանսֆերտների առումով նկատվում են դրական տեղաշարժեր, որը թույլ կտա մոտ ապագայում մեղմացնել հանրապետության բնակչության եկամուտների շերտավորումը:

Դրա մասին է վկայում նաև ըստ դեցիլային խմբերի արտաքին տրանսֆերտների բացարձակ մեծության հավելածը:

Այսպիսով՝ ՀՀ բնակչության միջազգային աշխատանքային արտագաղթի դերը շատ մեծ է ինչպես հանրապետությունում գործազրկության՝ խրոնիկական բնույթ կրող բարձր մակարդակի հետ կապված սոցիալ-տնտեսական լարվածության թուլացման առումով, այնպես էլ բնակչության եկամուտների շերտավորման և աղքատության մակարդակի կրճատման իմաստով: Ընդ որում, մոտ ապագայում այդ դերը կաճի:

Այդ իսկ պատճառով հարկ է ակտիվացնել պետության մասնակցությունը հանրապետության բնակչության միջազգային աշխատանքային արտագաղթի քաղաքակիրթ ձևերի կազմակերպմանը՝ առկա հիմնախնդիրները լուծելով միջպետական համաձայնագրերի մակարդակով:

Ատենախոսության ի հիմնդրորդ՝ «Կենսաթոշակային համակարգի բարեփոխումները որպես ՀՀ բնակչության դրամական եկամուտների մակարդակի բարձրացման գործոն» գլխում քննարկվել է կենսաթոշակային բարեփոխումների գործընթացը ՀՀ-ում, բացահայտվել են կենսաթոշակային բաշխողական համակարգից կուտակայինին անցման շրջանի հիմնախնդիրները, ինչի հիման վրա մշակվել են այդ հիմնախնդիրների լուծման տարբերակներ, հիմնված օրենսդրական փոփոխությունների վրա:

Ընդհանրացնելով գիտական գրականության մեջ առկա տարբեր կարծիքները, ինչպես նաև մի շարք երկրների փորձը՝ աշխատանքում ներկայացվել է կենսաթոշակային համակարգի դասակարգումը:

<sup>37</sup> Հաշվարկված է ըստ՝ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը: Կիճակագրական-վերլուծական գեկույց: Եր., 2009, էջ 89: Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը: Կիճակագրական-վերլուծական գեկույց: Եր., 2011, էջ 118, 120-123:

<sup>38</sup> Հաշվարկված է ըստ՝ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը: Կիճակագրական-վերլուծական գեկույց: Եր., 2009, էջ 88: Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը: Կիճակագրական-վերլուծական գեկույց: Եր., 2011, էջ 118, 120-123:

Բաշխոդական կենսաթոշակային համակարգի կարևոր գծերից է դրա սոցիալական ուղղվածությունը:

Կուտակային կենսաթոշակային համակարգերի կիրառման դեպքում պետք է ապահովվի ապահովագրական վճարների և ապահովագրական վճարումների հաշվեկշռվածությունը, այսինքն՝ պարտավորությունների համարժեքությունը:

Շուկայական բարեփոխումների տարիներին ՀՀ սոցիալական ապահովագրության համակարգը սկսեց զարգանալ: Հանրապետության սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի բյուջեն, լինելով կենսաթոշակային համակարգի ֆինանսավորման աղբյուրը, տարիների ընթացքում դարձավ առավել պակասուրդային, ուստի սկսեց համալրվել պետական բյուջեի միջոցների հաշվին:

Այսպես, եթե 1998 թվականին ՀՀ պետական բյուջեից հատկացումները այդ հիմնադրամին կազմեցին դրա միջոցների ընդամենը 6,8%-ը, ապա 1999 թվականին՝ 11,7%-ը, 2000 թվականին՝ 18,7%-ը, 2001 թվականին՝ 20,7%-ը, 2002 թվականին՝ 21,9%-ը, իսկ 2003 թվականին արդեն՝ 25,4%-ը<sup>39</sup>: Հետագա տարիներին այդ հիմնադրամի (որը վերանվանվեց ՀՀ պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջե) սղությունը (դեֆիցիտայնությունը) պահպանվեց և 2005 թվականին նույնիսկ հասավ 30,1%-ի<sup>40</sup>: Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը՝ 2008 թվականին ՀՀ Կառավարության որոշմամբ վերացվեց պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեն. և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները ներառվեցին պետական բյուջեի ընդհանուր եկամուտներում: Սակայն դա արմատապես չլուծեց կենսաթոշակային համակարգի ֆինանսավորման պակասուրդայնության հիմնախնդիրը:

Այսպես, եթե սոցիալական նպաստները և կենսաթոշակները սոցիալական ապահովություն պարտադիր վճարներով 2008 թվականին ծածկվում էին 50,5%-ով, ապա 2009 թվականին արդեն՝ 42,8%-ով<sup>41</sup>: Համաձայն «Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի՝ այդ «ծածկումը» 2012 թվականին նախատեսված է 47,2%-ով<sup>42</sup>:

Հետևաբար, սոցիալական նպաստների և կենսաթոշակների վճարմանը նպատակաուղղվող միջոցների կեսից ավելին հատկացվում է պետական բյուջեի եկամուտների մնացած հոդվածների հաշվին: Այսպիսով՝ սոցիալական վճարումների «ինքնաձայնասծածկման» հիմնախնդիրը մնում է չլուծված:

Այդ հիմնախնդիրը առավել սրվում է՝ պայմանավորված հանրապետությունում անբարենպաստ ժողովրդագրական իրադրությամբ: Հայաստանի Հանրապետությունում ծնելիության մակարդակի նվազման պատճառով շուկայական բարեփոխումների տարիներին բացասական առումով կտրուկ փոխվեց բնակչության տարիքային կառուցվածքը:

Շուկայական բարեփոխումների տարիներին՝ 1990 թվականից սկսած, ՀՀ-ում աշխատունակ տարիքից ցածր տարիք ունեցող բնակչության տեսակարար կշիռը նվազել է 12,6 տոկոսային կետով, այն դեպքում, երբ աշխատունակ տարիքից բարձր տարիք ունեցող բնակչության տեսակարար կշիռը, ընդհակառակը՝ մեծացել է 3,4 տոկոսային կետով: Ընդ որում, աշխատունակ տարիքի բնակչության տեսակարար կշիռը 59,7%-ից աճել է մինչև 68,9%-ի, որը հետագա տարիներին իրական հիմք կստեղծի աշխատունակ

<sup>39</sup> Հաշվարկված է ըստ Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2001(1999, 2000): Եր., ՀՀ ԱԿԾ, 2001, էջ 378: Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2004: Եր., ՀՀ ԱԿԾ, 2004, էջ 393-394:

<sup>40</sup> Հաշվարկված է ըստ Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2008: Եր., ՀՀ ԱԿԾ, 2008, էջ 365:

<sup>41</sup> Հաշվարկված է ըստ Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2010: Եր., ՀՀ ԱԿԾ, 2010, էջ 381:

<sup>42</sup> Հաշվարկված է ըստ՝ «Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք, ընդունված է 08.12.2011 թ., ՀՕ-285-Ն, հոդված 6,8:

տարիքի բնակչության մասնաբաժնի կտրուկ կրճատման արդյունքում աշխատունակ տարիքից բարձր տարիք ունեցող բնակչության հետագա եական աճի համար<sup>43</sup>: Այդ հանգամանքը նշանակալիորեն կուժեղացնի կենսաթոշակային վճարումների «ճնշումը» հանրապետության պետական բյուջեի վրա: Այդ պայմաններում հանրապետության կենսաթոշակառուների և բնակչության սոցիալապես այլ խոցելի շերտերի եկամուտների մակարդակն էլ ավելի կնվազի:

Ընդ որում, նման հիմնախնդիր գոյություն ունի նաև անցումային տնտեսություն ունեցող մյուս երկրներում: Խնդրի լուծման նպատակով որոշվեց բաշխողական կենսաթոշակային համակարգից աստիճանական անցում կատարել կուտակային համակարգին, որի հետ կապված, 2010 թվականին ընդունվեցին համապատասխան՝ «Պետական կենսաթոշակների մասին» և «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքները:

Կուտակային կենսաթոշակային համակարգում առաջանում են նշանակալի ֆինանսական ռեսուրսներ (ապագա կենսաթոշակառուների խնայողությունները): Փաստորեն, կուտակային կենսաթոշակային համակարգը երկարատև ներդրումների աղբյուր է, որը հատկապես արդիական է զարգացող տնտեսությունների համար, որոնց բնորոշ գիծը կապիտալ ներդրումների ցածր մակարդակն է:

Իր հերթին, խնայողությունների արդյունավետ օգտագործման համար անհրաժեշտ է զարգացած ֆինանսական շուկայի առկայություն, քանի որ կենսաթոշակային ակտիվների ծավալը հասնում է զգալի մեծության:

Աշխատանքում շեշտադրում է արվում այն հանգամանքի վրա, որ կուտակային համակարգը պետք է լուծի եռակի խնդիր. առաջին՝ տարեց մարդկանց համար ապահովի արժանապատիվ եկամուտներ, երկրորդ՝ ծառայի որպես տնտեսական կարգավորման գործիք, երրորդ՝ խթանի ներդրումային ակտիվությունը:

Կուտակային կենսաթոշակային համակարգի եական առանձնահատկություններից մեկը բնակչության ծերացման հիմնախնդրի նկատմամբ պակաս զգայուն լինելն է: Յուրաքանչյուր անհատ իր կենսաթոշակը ինքնուրույն է ձևավորում: Նրա կատարած վճարումները ուղղվում են ոչ թե այլ անձանց կենսաթոշակի վճարմանը, այլ՝ մասնագիտացված ապահովագրական ընկերության իր անհատական հաշվին: Պետության մասնակցությունն արտահայտվում է միայն այդ ընկերությունների գործունեության նկատմամբ հսկողության իրականացմամբ և կենսաթոշակային կուտակումների համար իրավական երաշխիքների ապահովմամբ:

Այս ամենը խոսում է այն մասին, որ կենսաթոշակային ապահովության ֆինանսական կայունության բարելավման համար անհրաժեշտ է անցում կատարել ապահովագրության կուտակային համակարգին, որը կնպաստի ժողովրդագրական գործոններից կախվածության թուլացմանը և կօգնի հիմնավորապես զբաղվելու երկրի ժողովրդագրական իրավիճակի բարելավմամբ, որը շատ կարևոր է Հայաստանի Հանրապետության համար:

ՀՀ կենսաթոշակային համակարգի արդեն իսկ ձևավորված օրենսդրական դաշտի վերլուծության արդյունքում պարզվեց, որ ժամանակակից փուլում հանրապետությունում պետական կենսաթոշակային համակարգը զուգակցելու է ինչպես բաշխողական, այնպես և կուտակային տարրեր: Ինչպես երևում է գծապատկեր 2 -ից, ՀՀ կենսաթոշակային համակարգի բաշխողական և կուտակային տարրերի համագոյակցություն կլինի, լավագույն դեպքում, մի քանի տասնյակ տարի՝ նույնիսկ այն ժամանակ, երբ 1974 թվականին ծնվածները հասնեն թոշակային տարիքի. այսինքն՝ 2037 թվականից

<sup>43</sup> Տես Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը: Վիճակագրական-վերլուծական զեկույց: Եր., ԳԿԿԸ, 2011, էջ 26:

հետո: Դա բացատրվում է նրանով, որ պարտադիր կուտակային բաղադրիչի պարտադիր մասնակիցները մինչև 2014 թվականը միջոցները հատկացնելու են 33 պետական բյուջե բաշխողական համակարգով: Դետեքստը՝ կուտակային հատկացումներին նախորդած տարիների համար նրանք իրավունք ունեն պահանջելու փոխհատուցել այդ տարիների համար չկուտակված միջոցների դրամական եկամուտները: Այսպիսով՝ բնակչության կենսաթոշակային ապահովության կուտակային համակարգը «մաքուր տեսքով» կգործի ներկա դարաշրջանի կեսերից ոչ շուտ:

Ելնելով վերոշարադրյալից՝ կարելի է 33 կենսաթոշակային համակարգի զարգացումը պայմանականորեն տրոհել երկու փուլի: Առաջին փուլը կենսաթոշակային համակարգի բաշխողական (հիմն) և կուտակային (նոր ծնվող) տարրերի համատեղ գոյությունն է:

Երկրորդ փուլը (մեր դարաշրջանի 2-րդ կեսը) կուտակային կենսաթոշակային համակարգի համատարած կիրառությունն է:

Դետեքստի կարծիքով՝ առավել լուրջ հիմնախնդիրներ կարող են ծագել անցյալ շրջանում, այսինքն՝ մոտ ապագայում՝ 33 կենսաթոշակային համակարգի զարգացման առաջին փուլում: Դա բացատրվում է այն հանգամանքով, որ հետագա մի քանի տասնյակ տարիներին բաշխողական համակարգի գոյությունը, որը նախորդ երկու տասնամյակում ցույց է տվել իր անկատարությունը, ամբուսափելի դարձնելով 33 կենսաթոշակային համակարգի բարեփոխումները, կխոչընդոտի կենսաթոշակառուների դրամական եկամուտների կտրուկ բարձրացմանը:

Դետեքստը՝ առաջարկվում է այդ հիմնախնդրի լուծման երկու տարբերակ:

**Առաջին՝** պասիվ, որը ենթադրում է այդ բնագավառում գործող օրենսդրության պահպանում և կենսաթոշակների բարձրացում 33 պետական բյուջեի եկամտային մասի աճի ու այդ նպատակով բյուջեի ծախսային մասի հատկացումների հնարավորության չափերի համապատասխան: Սակայն այս տարբերակը այնքան էլ վստահելի չէ, քանի որ ենթադրում է պետական բյուջեի եկամուտների առավել արագ աճ: Դրան կարելի է հասնել հարկերի հավաքագրմամբ՝ արմատական փոփոխություններ կատարելով վարչարարության բնագավառում, այսինքն՝ էքստենսիվ ճանապարհով (որն ունի իր սահմանները), երկրորդ՝ ինտենսիվ ուղիով, այսինքն՝ ի հաշիվ 33 տնտեսական զարգացման առավել բարձր աճի տեմպերի ապահովման:


**Երկրորդ՝** ակտիվ, որը ենթադրում է պասիվ տարբերակի երկու ուղիների օգտագործման հետ միասին 33 կենսաթոշակային համակարգի օրենսդրական բազայի փոփոխությունների իրականացում: Այդ փոփոխությունները, հեղինակի կարծիքով, հիմնականում կապված են կենսաթոշակային միջոցների ձևավորման աղբյուրների և չափերի հետ:

Համաձայն «Կուտակային կենսաթոշակների մասին» 33 օրենքի, որը գործողության մեջ է դրվելու 2014 թվականին, պարտադիր կուտակային բաղադրիչին պարտադիր կարգով մասնակիցների համար վճարները կուտակվում են նրանց բազային եկամտի 10% դրույքաչափով:

Ընդ որում, մասնակիցները միջին չափով վճարում են բազային եկամտի 5%-ի չափով, իսկ մնացած 5%-ը մասնակիցների համար վճարվում է պետական բյուջեից<sup>44</sup>: Իսկ «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» 33 օրենքի համաձայն՝ վարձու աշխատողների սոցիալական վճարի չափը, կախված աշխատավարձի և դրան հավասարեցված եկամուտների ամսական չափից, կազմում է 3% և 8%<sup>45</sup>, այսինքն, միջին հաշվով՝ 5%:

<sup>44</sup> Տե՛ս «Կուտակային կենսաթոշակների մասին» 33 օրենք, ընդունված է 22.12.2010 թ., ԳՕ-244-Ն, հոդված 7:

<sup>45</sup> Տե՛ս «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» 33 օրենք, ընդունված է 26.12.1997 թ., ԳՕ-179, հոդված 5:



**Գծապատկեր 2. ՀՀ կենտրոնական համակարգը**



Դետևաբար՝ պարտադիր կուտակային բաղադրիչի ձևավորման աղբյուրը ոչ թե պետական բյուջեն է, որը երևում է գծապատկեր 2-ից, այլ մասնակիցների կողմից պետական բյուջե ուղղվող միջոցները, որոնք, որոշ իմաստով, «կվերադառնան» նրանց՝ որպես պարտադիր կուտակային բաղադրիչ:

Դեղինակի կարծիքով այս խնդիրը չի լուծվի մաև «Եկամտային հարկի մասին» ԴԳ օրենքի՝ 2013 թվականին ուժի մեջ մտնելուց հետո: Ասկայն կարևոր է ոչ թե դա, այլ այն հանգամանքը, որ, սկսած 2014 թվականից, յուրաքանչյուր տարի մեծ չափով կաճեն պարտադիր կուտակային բաղադրիչի ձևավորմանն ուղղվող պետական բյուջեից կատարվող ծախսերը:

Փաստորեն, պարտադիր կուտակային բաղադրիչի մասնակիցները չեն մասնակցի այն կենսաբաշակառուների համար միջոցների ձևավորմանը, ովքեր վճարվում են բաշխողական համակարգով, այն դեպքում, երբ նրանց կենսաթոշակները մինչև 2014 թվականը աշխատանքային ստաժի համար կվճարվեն ըստ այդ համակարգի: Մյուս կողմից՝ դա կհանգեցնի սերունդների համերաշխության սկզբունքի խախտմանը, երբ առավել երիտասարդ սերունդները կենսաթոշակ են «վաստակում» առավել տարիքով սերունդների համար:

Եվ վերջապես, որը ավելի կարևոր է, բաշխողական համակարգի ձևավորման նպատակով պետական բյուջե ուղղվող միջոցները յուրաքանչյուր տարի կնվազեն: Կարող է արդյոք ԴԳ պետական բյուջեն կրել մեծ ծանր բեռ, թե՛ դա ձեռք կբերվի մինչև 1974 թվականը ծնված կենսաթոշակառուների թոշակների միջին չափի հաշվին: Արդյո՞ք դա պատճառ է չի դառնա մինչև 1974 թվականը և դրանից հետո ծնված բնակչության դրամական եկամուտների կտրուկ շերտավորման:

Դեղինակի կարծիքով՝ երկու հարցին էլ պետք է տալ դրական պատասխան: Այդ իսկ պատճառով, ըստ հեղինակի, ճիշտ կլինի «Կուտակային կենսաթոշակների մասին» ԴԳ օրենքի 7-րդ հոդվածում կատարել փոփոխություն, որը ոչ մի բացասական հետևանք չի առաջացնի, քանի որ կուտակային վճարներ կատարելու պարտավորությանը վերաբերող դրույթները ուժի մեջ են մտնելու 2014 թվականի հունվարի 1-ից<sup>46</sup>:

Այդ փոփոխությունները, մասնավորապես, վերաբերում են պարտադիր կուտակային բաղադրիչին պարտադիր կարգով մասնակիցների համար պետական բյուջեից 0%-ից մինչև 5% հատկացումների՝ ըստ տարիների պրոգրեսիվ սանդղակի սահմանմանը:

Դա թույլ կտա, մի կողմից՝ տնտեսել պետական բյուջեի միջոցները, որոնք կարող են լրացուցիչ ուղղվել մինչև 1974 թվականը ծնվածների բաշխողական կենսաթոշակների բարձրացմանը, մյուս կողմից՝ կրճատել 1974 թվականից հետո ծնվածների կուտակային կենսաթոշակից դրանց տարբերությունը:

Ճիշտ է, օրենքը նախատեսում է պարտադիր կուտակային բաղադրիչին մինչև 1974 թվականը ծնվածների կամավոր մասնակցությունը, սակայն այդ դեպքում պետական բյուջեից հավելյալ վճար չի տրվում<sup>47</sup>: Վերջինս օրենքի այդ նորմի կիրառումն ի չիք է դարձնում: Առաջարկված փոփոխությունը թույլ կտա լուծել այդ հիմնախնդիրը:

Ատենախոսության «եզրակացություններ» բաժնում հեղինակն ընդհանրացրել և ամփոփել է հետազոտության հիմնական արդյունքները, որոնք ներկայացվել են հետևյալ դրույթներով.

<sup>46</sup> Տե՛ս «Կուտակային կենսաթոշակների մասին» ԴԳ օրենք, ընդունված է 22.12.2010 թ., ԳՕ-244-Ն, հոդված 86:

<sup>47</sup> Տե՛ս «Կուտակային կենսաթոշակների մասին» ԴԳ օրենք, ընդունված է 22.12.2010 թ., ԳՕ-244-Ն, հոդված 6,7:

1. Մարդկանց պահանջմունքները, դրանց աճը և բավարարման աստիճանը կենսամակարդակի բովանդակության որոշման առանցքն են: Կենսամակարդակը հանդես է գալիս որպես հարաբերական մեծություն՝ որպես առկա բարիքների ու ծառայությունների և այդ բարիքների ու ծառայությունների նկատմամբ պահանջմունքների հարաբերակցություն, այսինքն՝ որոշվում է որպես բարիքների ու ծառայությունների նկատմամբ բնակչության պահանջմունքների բավարարման մակարդակ: Այդպիսի մեկնաբանությունը գրականության մեջ անվանում են «նեղ»:

«Կենսամակարդակ» հասկացությունը լրացվում է «կյանքի որակ» հասկացությամբ: Թեև *կենսամակարդակ* և *կյանքի որակ* կատեգորիաները իմաստային ընդգրկմամբ բավականաչափ մոտ են, այնուամենայնիվ, նույնական չեն: Գործնականում կյանքի որակի վերլուծությունը ամբողջ ծավալով փաստորեն չի իրացվում՝ կապված հենց այդ որակը որոշող առանձին պարամետրերի գնահատման մեխանիզմի մշակված չլինելու հետ: Փաստորեն, կյանքի որակի վերլուծությունը մոտ է ՄԱԿ-ի Ձարգացման ծրագրի շրջանակներում իրականացված մարդկային ներուժի զարգացման ինդեքսի (ՄՆՁԻ) հաշվարկներից:

2. Տնտեսագետների տարբեր կարծիքների վերլուծության արդյունքում պարզվեց, որ ժամանակակից պայմաններում մասնագետները առավելապես հակված են այն տեսակետին, որ գնողունակ վարքագծի բազմազան գործոնները կենտրոնանում են երկու համադրական պարամետրերում՝ կյանքի որակ և կենսամակարդակ: Ըստ այդ չափանիշների՝ անհատական պահանջմունքների ամբողջության հատվածավորմամբ կարելի է բավական հաջող լուծել վերլուծության և կանխատեսման խնդիրները: Այդ դեպքում «կյանքի որակը» համարվում է այնպիսի կատեգորիա, որը ներառում է սպառման մոդելը որոշող սոցիալ-մշակութային գործոնները, իսկ «կենսամակարդակ» կատեգորիան՝ տնտեսական գործոնները, այսինքն՝ այն «տնտեսական վիճակը», որն արտահայտվում է մարդկանց կողմից տարբեր սպառողական մավաքածուների սպառմամբ:

Այսպիսով, կենսամակարդակն արտացոլում է շուկայական տնտեսության կարևոր բաղադրիչը՝ բնակչության գնողունակությունը, ինչը հիմնականում պայմանավորված է նրանց եկամուտների (հատկապես դրամական) մակարդակով:

3. Ուսումնասիրելով տնտեսագիտական տարբեր դպրոցների՝ բնակչության եկամուտների լուծյան և դրանց ձևավորման վերաբերյալ տեսակետների սկզբունքային տարբերությունները՝ աշխատանքում եզրակացություն է արվում, որ այդ դպրոցները միասնական են եկամտի յուրաքանչյուր տեսակի՝ արտադրության որոշակի գործոնով պայմանավորված լինելու հարցում:

4. ԴՅ տնային տնտեսությունների համախառն եկամուտների 2004-2010թթ. կառուցվածքի փոփոխությունները վկայում են այն մասին, որ տեղի է ունեցել դրամական եկամուտների տեսակարար կշռի աճ, ինչը խոսում է հանրապետությունում շուկայական հարաբերությունների ձևավորման դրական արդյունքների մասին: Ընդ որում, այդ դրական գործընթացն առավելապես վերաբերում է քաղաքային բնակավայրերին: Գյուղական բնակավայրերում դրամական եկամուտների տեսակարար կշիռը 2010 թվականին, ըստ հանրապետության ընդհանուր տվյալների, դեռևս զիջում է 2004 թվականի այդ ցուցանիշին:

Նշված ժամանակաշրջանում դրական փոփոխություններ են կատարվել նաև բնակչության դրամական եկամուտների մեջ վարձու աշխատանքից եկամուտների բաժնի մեծացման առումով: Ընդ որում, այդ գործընթացը միաժամանակ տեղի է ունեցել ինչպես քաղաքային, այնպես և գյուղական բնակավայրերում:

5. ՀՀ տնային տնտեսությունների (ըստ դեցիլային խմբերի) դրամական եկամուտների այդ ժամանակաշրջանի վերլուծությունը փաստում է, որ միջին շերտի կենսամակարդակի բարձրացման հիմնական աղբյուր են հանդիսացել աշխատանքային եկամուտները և արտերկրում ապրող հարազատներից ստացվող տրանսֆերտները:

Սակայն նույնը չի կարելի ասել ՀՀ բնակչության 10% առավել ապահովված շերտերի դրամական եկամուտների կառուցվածքի դինամիկայի վերաբերյալ: Կենսամակարդակի աճի նշված աղբյուրները համալրվել են նաև պետական սոցիալական տրանսֆերտներով:

Պատկերը կտրուկ փոխվում է, երբ հետազոտվում են հանրապետության բնակչության 10% նվազագույն ապահովված շերտերի դրամական եկամուտները: Պետական սոցիալական և արտերկրից բարեկամների տրանսֆերտների բաժինների մեծացման հետ շեշտակի աճել է այլ եկամուտների մասնաբաժինը՝ 2010 թվականին հասնելով 21,1%-ի, 2004 թվականի 12,5%-ի փոխարեն, այն դեպքում, երբ աշխատանքային եկամուտների առանց այն էլ փոքր բաժինը նվազել է: Այդ փաստը վկայում է դեպի ստվերային տնտեսություն և աշխատանքի ստվերային վարձատրություն բնակչության այդ շերտի ակտիվ «հեռանալու» մասին:

6. ՀՀ տնային տնտեսությունների 2004-2010թթ. սպառողական ծախսերի կառուցվածքի վերլուծությունը փաստում է այն մասին, որ դրանց գերակշռող մասը դեռևս բաժին է ընկնում սննդամթերքին, ինչը վկայում է աղքատության բարձր մակարդակի մասին: Միաժամանակ նկատվում է դրական միտում. աճել են ոչ պարենային ապրանքների և ծառայությունների բաժինները, այդ թվում՝ գյուղական բնակավայրերում:

ՀՀ բնակչության «բևեռային» խմբերի հարաբերակցության գործակցի դինամիկան ցույց է տալիս, որ հանրապետությունում դեռևս խորն է բաշխման անհավասարաչափությունը, ինչը վկայում է այդ հիմնախնդրի կարգավորման պետական մասնակցության անհրաժեշտության մասին:

7. Շուկայական վերափոխումների տարիներին տեղի ունեցան եական փոփոխություններ ՀՀ բնակչության դրամական եկամուտների կառուցվածքում, ինչի արդյունքում զգալի աճել են աշխատանքի վարձատրության և սոցիալական տրանսֆերտների տեսակարար կշիռները:

Սակայն չափազանց խորը շերտավորում է պահպանվում ըստ ՀՀ տնտեսական գործունեության առանձին տեսակների՝ միջին ամսական անվանական աշխատավարձի գծով: Այսպես՝ 2010 թվականին ֆինանսական գործունեությունում միջին ամսական աշխատավարձը գրեթե երեք անգամ, իսկ հանքագործական արդյունաբերությունում ավելի քան երկու անգամ գերազանցում էր ՀՀ տնտեսության միջին աշխատավարձը. այն դեպքում, երբ մկնորսության և ձկնաբուծության բնագավառում կազմում է միջինի ընդամենը կեսը, իսկ առողջապահության, սոցիալական և կրմունյալ ծառայությունների մատուցման ոլորտներում՝ գրեթե երկու երրորդը: Ըստ տնտեսական գործունեության տեսակների՝ միջին աշխատավարձի էքստրեմալ մակարդակների ճեղքվածքը 2010 թվականին աճեց՝ կազմելով 5,4 անգամ՝ 2009 թվականի 4,4-ի դինսաց:

ՀՀ-ում դեռևս պահպանվում է նաև միջին աշխատավարձի «գեներային» նկարագիրը:

Ինչ վերաբերում է աշխատավարձի տարածաշրջանային շերտավորմանը, ապա դա հիմնականում պայմանավորված է մարզերում տնտեսական գործունեության այս կամ այն տեսակի զարգացման աստիճանով:

8. Աշխատավարձի սահմանված նվազագույն չափի և աղքատության գծերի դինամիկայի 2004-2010թթ. ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ նվազագույն աշ-

խատավարձը ծածկում էր միայն ծայրահեղ (պարենային) աղքատության գիծը (բացառությամբ 2005 թվականի), իսկ աղքատության ընդհանուր գիծը ծածկել հաջողվեց միայն 2009 թվականից սկսած: Ավելին, իրական նվազագույն աշխատավարձի միջին տարեկան հավելածը այդ նույն ժամանակաշրջանում կազմել է 14,8%: Այսպիսով, այդ տարիներին, կարծես թե, տեղի է ունեցել ՀՀ բնակչության բարեկեցության եական բարելավում սպառողական գների ինդեքսի միջին տարեկան հավելածի 5,9%-ի պայմաններում:

Սակայն, երբ աղքատության գծերի միջին տարեկան հավելածը համեմատում ենք նվազագույն աշխատավարձի իրական չափի հետ, որը հաշվարկված է շրջայական եղանակով որոշված սպառողական գների ինդեքսով, ապա վերջինս աննշան չափով է գերազանցում աղքատության գծերը: Ուստի, հանրապետության բնակչության եկամուտների արագ աճի ապահովման համար Կառավարությունը պետք է փնտրի նվազագույն աշխատավարձի հետագա բարձրացման լրացուցիչ ռեսուրսներ:

Նվազագույն աշխատավարձի, ինչպես նաև պետության կողմից հատկացվող այլ երաշխիքների բնագավառում 2004-2008 թթ. իրականացված քաղաքականությունը հնարավորություն տվեց աղքատության մակարդակը 41%-ից նվազեցնել 26,6%-ի: Սակայն համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով այն աճեց՝ 2009 թվականին կազմելով 33,9%, իսկ 2010 թվականին՝ 34,2%: Հետևաբար՝ ֆինանսատնտեսական ճգնաժամի հիմնական հարվածը տարածվել է հանրապետության բնակչության աղքատ շերտերի վրա: Այդ իսկ պատճառով սոցիալական երաշխիքների տրամադրման բնագավառում ՀՀ Կառավարության գործունեությունը մոտ ժամանակներս պետք է ուղղված լինի բնակչության առավել խոցելի շերտերի կենսամակարդակի բարձրացմանը:

9. Ըստ առանձին ժամանակաշրջանների ՀՆԱ աճի՝ ՀՀ բնակչության աղքատության մակարդակի վրա ազդեցության ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հանրապետության համար խիստ կարևոր է տնտեսական աճի մշտապես անշեղ ապահովումը: Հակառակ դեպքում առավել արագ տեմպերով ի չիք կդառնան հանրապետության բնակչության աղքատության կրճատման և բարեկեցության բարձրացման ձեռք բերված մակարդակները:

Հայաստանի Հանրապետությունում նշված հիմնախնդրի լուծման համար մեծ նշանակություն է տրվում փոքր բիզնեսի զարգացմանը: Արդյունքում՝ 2004-2010 թվականներին արդյունաբերությունում մեծացել է ինչպես փոքր և միջին ձեռնարկությունների տեսակարար կշիռը և դրանցում աշխատողների մասնաբաժինը, այնպես էլ նրանց կողմից արտադրված արտադրանքի տեսակարար կշիռը: Դրա հետ մեկտեղ հանրապետությունում դիտվում են փոքր բիզնեսի զարգացման նաև բացասական կողմեր:

Նախևառաջ դա պայմանավորված է ՀՀ-ում փոքր բիզնեսի տարածաշրջանային տեսանկյունից ոչ համաչափ բաշխվածության և զարգացման հետ: Այն հիմնականում զարգացում է ստացել երևան քաղաքում:

Երկրորդ՝ աշխատանքային ռեսուրսների օգտագործման արդյունավետության տեսանկյունից ծանրության կենտրոնը շեղվում է ոչ հօգուտ փոքր բիզնեսի: Աշխատանքի արտադրողականությունը հանրապետության խոշոր արդյունաբերական ձեռնարկություններում 65%-ով ավելի բարձր է, քան փոքր և միջին ձեռնարկություններում, իսկ մանրածախ առևտրի շրջանառությունում՝ 155%-ով: Աշխատանքի արդյունավետության այդքան մեծ տարբերությունը, հատկապես վերջինիս դեպքում, որոշ իմաստով բացատրվում է փոքր և միջին ձեռնարկությունների ստվերային ապրանքաշրջանառության

մեծ բաժնի առկայությամբ: Առկա են նաև օբյեկտիվ գործոններ՝ պայմանավորված ՓՄՁ ցածր տեխնիկական հագեցվածությամբ, նոր տեխնոլոգիաների բացակայությամբ:

10. ՀՀ-ն ունի հզոր ինովացիոն հնարավորություններ, և գիտական ոլորտում նախորդ տարիների ստեղծվել են բոլոր մախադրյալները՝ հատկապես բարձր տեխնոլոգիական արտադրամեքի արտադրության ոլորտում մեծ արդյունքների հասնելու համար: Այդ կապակցությամբ անհրաժեշտ է գիտական գաղափարները գործնականում արագ օգտագործելու և միջազգային չափանիշների համապատասխան նոր արտադրատեսակների սերիական թողարկման հիմքեր ստեղծել: Առկա իրավիճակի փոփոխության հնարավորություններից մեկը ինովացիոն փոքր ձեռնարկությունների գործունեության ակտիվացման համապատասխան պայմանների ստեղծումը կարող է լինել, որոնց հիմնական բաղադրիչներն են տեխնոպարկերը, քիզնես-ինկուբատորները և վենչուրային հիմնադրամները:

11. ՀՀ բնակչության դրամական եկամուտների մակարդակի վրա մեծ ազդեցություն ունի տնտեսության թափանցիկությունը: Այդ իսկ պատճառով, հիմնվելով չհաշվառվող տնտեսության միջազգային դասակարգման վրա, աշխատանքում փորձ է արվել ամուղդակի մակրոտնտեսական եղանակի օգնությամբ գնահատելու դրա մակարդակը ՀՀ-ում:

Ստվերային, թաքնված տնտեսության նպատակը ձեռնարկատիրական լրացուցիչ շահույթի ստացումն է այնպիսի ծախսերից խուսափելու հաշվին, ինչպիսիք են հարկերը, աշխատողների սոցիալական ապահովագրության հատկացումները և այլն: Չետևաբար՝ պաշտոնապես ստացված շահույթը, որպես կազմակերպությունների գործունեության ֆինանսական արդյունքների գնահատական, պետք է համընկնի կամ մոտ լինի ազգային հաշիվների «եկամուտների ձևավորման հաշվի» համապատասխան ցուցանիշներին:

Այդ ցուցանիշների համադրման խոչընդոտների հաղթահարման միջոցով հաջողվել է որոշել չհաշվառվող տնտեսության ծավալը ՀՀ-ում:

12. Հիմնվելով ՀՀ ԱԿԾ ոչ ֆորմալ զբաղվածությանը վերաբերող պաշտոնական ուսումնասիրությունների վրա, աշխատանքում գնահատվել է ոչ ֆորմալ զբաղվածությունը ունեցողների դրամական եկամուտների մակարդակը:

Թեև ՀՀ տնտեսությունում ոչ ֆորմալ զբաղվածների մակարդակը 2009 թվականին կազմել է 30,1%, սակայն առավել բարձր մակարդակ է գրանցվել տնտեսական գործունեության այնպիսի տեսակներում, ինչպիսիք են գյուղատնտեսությունը, շինարարությունը, առևտուրը, մեքենաների նորոգումը, հյուրանոցները և ռեստորանները, որը միանգամայն օրինաչափ է: Ավելին՝ առաջին երկուսում 2008-2009թթ. այդ մակարդակը աճել է՝ ամբողջությամբ վերցրած ՀՀ տնտեսության նշված բնագավառում կատարված դրական տեղաշարժերի պայմաններում:

Միջին ամսական դրամական եկամուտները ոչ ֆորմալ զբաղվածների շրջանում, հանրապետության տնտեսությունում ամբողջությամբ վերցրած, մեկ քառորդով ցածր են, քան ֆորմալ զբաղվածների դեպքում է:

Ելնելով դրանից՝ հետևություն է արվում այն մասին, որ ոչ ֆորմալ զբաղվածությունը ծնել է ստվերային վարձատրություն, որն էլ իր տրամաբանական մարմնավորումն է ստացել ոչ ֆորմալ զբաղվածների ցածր դրամական եկամուտներում:

13. ԽՍՀՄ փլուզումից հետո ՀՀ բնակչության միջազգային միգրացիայի ինտենսիվությունը կտրուկ աճեց, հատկապես դրա երկու կարևոր՝ աշխատանքային և ընտանեկան ձևերինը:

1995-2010 թթ. ՀՀ-ից արտագաղթել է 140100 մարդ, ընդ որում, 83,5%-ը ԱՊՀ երկրներ: Այդ ժամանակաշրջանի պաշտոնական տվյալների վերլուծությունը ցույց է

տալիս, որ արտագաղթածների գերակշռող մասը՝ 81,2%-ը, չի վերադարձել հայրենիք: Միզրացիայի սալդոյի վերաբերյալ այդ ժամանակաշրջանի տվյալների համաձայն՝ արտագաղթն առավել մեծ չափերի է հասել այն տարիներին, երբ ՀՀ-ում կենսամակարդակը ցածր է եղել և զգալիորեն զիջել է ԱՊՀ երկրների միջին մակարդակը, մասնավորապես Ռուսաստանի Դաշնության: Ավելին, այդ տարիներին մեծացել է նաև միզրացիայի բացասական սալդոյի տեսակարար կշիռը արտագաղթածների թվաքանակի նկատմամբ: Այսպես, 2000 թվականին այն կազմել է արտագաղթածների 86,7%-ը, 2001 թվականին՝ 86,6%-ը, 2002 թվականին՝ 84,4%-ը:

ՀՀ-ից լայնամասշտաբ արտագաղթի պատճառ է դառնում նաև վերջին տասնամյակում բնակչության դրամական եկամուտների համեմատաբար ցածր մակարդակը: Հանրապետության բնակչության դրամական եկամուտների մակարդակը, ԱՄՆ դոլարով արտահայտված, ավելի քան 4 անգամ ցածր է Ռուսաստանի Դաշնության նույն ցուցանիշից: ԱՊՀ անդամ 7 երկրներից Հայաստանը այդ ցուցանիշով չի զիջում միայն Տաջիկստանին և Ուզբեկստանին: Սակայն, միայն գրանցված գործազրկության մակարդակի ցուցանիշով, նույնիսկ բավական խոշորամասշտաբ արտագաղթի պայմաններում, այնուամենայնիվ, հանրապետությունը մշտապես գտնվում է ոչ ցանկալի վիճակում:

Այսպես, 2000 թվականին ԱՊՀ երկրների ընդհանուր գործազրկության 2,3%-ի պայմաններում, ՀՀ-ում այն կազմել է 10,7%: Վերջին տասնամյակի հետագա տարիներին այդ ցուցանիշը մի փոքր նվազել է, սակայն 2010 թվականին կազմել է 6,8%, այն դեպքում, երբ ԱՊՀ երկրներում կազմել է 1,8%:

Բնակչության միզրացիան՝ հատկապես աշխատանքային, պետք է կարգավորվի դրոճոր պետությունների կողմից: Այդ ոլորտում ակտիվ պետական քաղաքականությունը թույլ կտա եականորեն թուլացնել հանրապետությունում գործազրկության հետ կապված լարվածությունը: Աշխատուժի արտահանումը ոչ թե պետք է կրի տարերային, չկարգավորվող բնույթ, այլ պետք է լինի ՀՀ տնտեսական վարագման կարևոր օղակը՝ ապահովելով երկրից աշխատուժի ելքից կորուստների գործարկությունը և ընդունող երկրներում աշխատող միզրացիների իրավունքների պաշտպանությունը:

ՀՀ միզրացիոն քաղաքականությունը պետք է հենվի հետևյալ սկզբունքների վրա.

1. ՀՀ գործազրկության մակարդակի նվազեցում դեպի այն երկրներ աշխատուժի արտահանման հաշվին, որտեղ առկա է համապատասխան պահանջարկ,
2. միզրացիների՝ հայրենիք վերադարձի երաշխիքներ,
3. այն մասնագետների միզրացիայի կանխում, ում նկատմամբ տեղական աշխատաշուկայում առկա է մեծ պահանջարկ,
4. արտասահմանում իրենց որակավորումը բարձրացրած և հայրենիք վերադարձած մասնագետների միջոցով աշխատողների ընդհանուր մասնագիտական մակարդակի բարձրացում,
5. արտաքին դրամական տրամսֆերտների հոսքի հսկողություն:

Այս սկզբունքների ապահովման նպատակով հարկ է ակտիվացնել պետության մասնակցությունը հանրապետության բնակչության միջազգային աշխատանքային արտագաղթի քաղաքակիրթ ձևերի կազմակերպմանը՝ առկա հիմնախնդիրները լուծելով միջպետական համաձայնագրերի մակարդակով:

14. Աշխատանքային արտագաղթը, որը հանրապետությունում ձևավորված սոցիալ-տնտեսական վիճակի, գործազրկության բարձր մակարդակի և բնակչության ցածր կենսամակարդակի հետևանք է, վերջինիս վրա թողնում է նաև դրական ազդեցություն: Մի կողմից՝ գործազրկության մակարդակի իջեցումը նվազեցնում է բյուջեի սոցիալական ծանրաբեռնվածությունը, և ազատված դրամական միջոցները կարող են ուղղվել սո-

ցիալական այլ նպատակների իրականացմանը կամ գործազրկության նպաստների ծավալի մեծացմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը: Մյուս կողմից՝ արտագաղթածների հայրենիք ուղարկած դրամական միջոցների հաշվին բարձրանում է հանրապետության բնակչության կենսամակարդակը՝ մեծացնելով նաև Հայաստանի Հանրապետության վճարային հաշվեկշռում արտաբժույթի մուտքերը:

2004-2009 թթ. Հայաստանից դուրս ապրող բարեկամներից ստացվող տրանսֆերտների տեսակարար կշիռը նվազման միտում է ունեցել՝ 2009 թվականին կազմելով հանրապետության տնային տնտեսությունների դրամական եկամուտների 7,5%-ը: Բացարձակ առումով այն աճել է 884 դրամով, այսինքն՝ 61,8%-ով: Սակայն 2010 թվականին դրա տեսակարար կշիռը շեշտակի աճել է՝ կազմելով տնային տնտեսությունների դրամական եկամուտների 10,0%-ը: ՀՀ տնային տնտեսությունների դրամական եկամուտների կազմում հանրապետությունից դուրս ապրող բարեկամներից ստացվող տրանսֆերտների տեսակարար կշիռի այդպիսի աննախադեպ աճը պայմանավորված էր համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով վերջին տարիներին աղքատության ցուցանիշների վատթարացմամբ և դրամական եկամուտների կարևորագույն աղբյուրի՝ իրական աշխատավարձի աճի տեմպերի նվազմամբ:

ՀՀ տնային տնտեսությունների՝ ըստ դեցիլային խմբերի կառուցվածքի վերլուծությունը վկայում է, որ Հայաստանից դուրս ապրող բարեկամներից ստացվող տրանսֆերտները, մի կողմից՝ ուղղվելով բնակչության աղքատ շերտերի գոյատևմանը, մյուս կողմից՝ բնակչության հարուստ շերտերի դրամական եկամուտների լրացմանը, չեն նպաստում բնակչության տարբեր շերտերի կենսամակարդակների մոտեցմանը: ՀՀ-ում արտաքին տրանսֆերտներն էլ ավելի են մեծացնում հարուստների և աղքատների կենսամակարդակների միջև ճեղքվածքը, այսինքն՝ խորացնում են բնակչության եկամուտների շերտավորումը:

Սակայն Հայաստանից դուրս ապրող բարեկամներից ստացվող տրանսֆերտների տեսակարար կշիռի դինամիկայում, ուսումնասիրվող ժամանակաշրջանում, նկատվում են նաև դրական միտումներ: Այսպես, 2004-2010 թթ. (բացառությամբ հետճգնաժամային տարիների) 1-ից 5 և, մասնակիորեն՝ նաև 6 դեցիլային խմբերում նկատվում են արտաքին տրանսֆերտների տեսակարար կշիռի աճի հստակ միտումներ: Եվ, ընդհակառակը՝ հստակ արտահայտված հակառակ միտում է դիտվում 7 և 10 դեցիլային խմբերում: Այսպիսով՝ եթե բացառենք հետճգնաժամային տարիները, ապա արտաքին տրանսֆերտների առումով նկատվում են դրական տեղաշարժեր, որը թույլ կտա մոտ ապագայում մեղմացնել հանրապետության բնակչության եկամուտների շերտավորումը: Դրա մասին է վկայում նաև ըստ դեցիլային խմբերի արտաքին տրանսֆերտների բացարձակ մեծությամբ աճելաճը:

15. Հետազոտությունները ցույց են տալիս, որ աղքատության մակարդակի առավել վատթարացում տեղի ունեցավ վերջին տարիներին՝ ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով: Ճգնաժամի հիմնական թիրախ դարձան հանրապետության բնակչության աղքատ շերտերը, մասնավորապես՝ կենսաթոշակառուները: Դա ի չիք դարձրեց ՀՀ կառավարության կողմից վարվող դրական քաղաքականությունը՝ ուղղված արագ տեմպերով կենսաթոշակների աճմանը: 2004-2009 թթ. միջին տարեկան հավելաճը կազմեց 16,3%, ինչը թույլ տվեց կենսաթոշակների միջին չափը 2008 թվականին կտրուկ մոտեցնել ծայրահեղ (պարենային) աղքատության գծին՝ այն ծածկելով 98,4%-ով, իսկ 2009 թվականին՝ գերազանցեց: Սակայն 2010 թվականին դրանց ճեղքվածքն աճեց՝ կազմելով 95,2%:

Վերոնշյալը վկայում է այն մասին, որ ՀՀ բնակչության դրամական եկամուտների շերտավորման մեղմման կարևորագույն գործոն է կենսաթոշակային համակարգի արմատական վերակառուցումը:

16. Շուկայական բարեփոխումների տարիներին ՀՀ սոցիալական ապահովագրության համակարգը սկսեց զարգանալ: Հանրապետության սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի բյուջեյն, լինելով կենսաթոշակային համակարգի ֆինանսավորման աղբյուրը, տարիների ընթացքում դարձավ առավել պակասուրդային, ուստի սկսեց համարվել պետական բյուջեի միջոցների հաշվին:

Սակայն, եթե սոցիալական նպաստները և կենսաթոշակները սոցիալական ապահովության պարտադիր վճարներով 2008 թվականին ծածկվում էին 50,5%-ով, ապա 2009 թվականին արդեն՝ 42,8%-ով: Համաձայն «Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի՝ այդ «ծածկումը» 2012 թվականին նախատեսված է 47,2%:

Հետևաբար, սոցիալական նպաստների և կենսաթոշակների վճարմանը նպատակաուղղվող միջոցների կեսից ավելին հատկացվում է պետական բյուջեի եկամուտների մնացած հոդվածների հաշվին: Այսպիսով՝ սոցիալական վճարումների «ինքնաձայնագրային» հիմնախնդիրը մնում է չլուծված:

Այդ հիմնախնդիրն առավել սրվում է՝ պայմանավորված հանրապետությունում անբարենպաստ ժողովրդագրական իրադրությամբ: Հայաստանի Հանրապետությունում ծնելիության մակարդակի նվազման պատճառով շուկայական բարեփոխումների տարիներին կտրուկ վատացավ բնակչության տարիքային կառուցվածքը: Խնդրի լուծման նպատակով որոշվեց բաշխողական կենսաթոշակային համակարգից աստիճանական անցում կատարել կուտակային համակարգին: Այդ իսկ պատճառով աշխատանքում կենսաթոշակային համակարգերի էվոլյուցիայի հիման վրա համակարգվել է տարբեր երկրների փորձը, ինչը թույլ է տվել եզրակացնել, որ կուտակային կենսաթոշակային համակարգը պահանջում է պահպանել ֆինանսական հետևյալ պայմանները.

- կայուն տնտեսական աճի և արդյունավետ ֆինանսական կարգավորման առկայություն,
- բանկային համակարգի արդիականացում, որը կապահովի գործառնությունների էժանացում և հուսալիություն,
- ներդրումային մեխանիզմների ցանցի կազմավորում, որը կերաշխավորի արժեթղթերի իրացվելիության բարձր մակարդակ:

ՀՀ-ում ներդրվող կուտակային համակարգը պետք է լուծի եռակի խնդիր. առաջին՝ տարեց մարդկանց համար ապահովի արժանապատիվ եկամուտներ, երկրորդ՝ ծառայի որպես տնտեսական կարգավորման գործիք, երրորդ՝ խթանի ներդրումային ակտիվությունը:

17. Բաշխողական կենսաթոշակային համակարգի հետ համեմատած, կուտակային համակարգը ոչ միայն ավելի է համապատասխանում ժամանակակից պայմաններին, այլ նաև տնտեսության համար աննախադեպ ծանրաբեռնվածություն չի ստեղծում: Կուտակային կենսաթոշակային համակարգը, որպես կանոն, նպաստում է տնտեսությունում շուկայական ինստիտուտների զարգացմանը՝ այդ ձևով բարձրացնելով դրանց արդյունավետությունը:

Իր հերթին, զարգացած ֆինանսական շուկաների և հաղորդակցության միջոցների առկայությունը թույլ է տալիս արդյունավետ տեղաբաշխել կենսաթոշակային ապահուստները և նվազեցնել համակարգի գործառնական ծախսերը: Կուտակային կենսաթոշակ-



Ների համար իրական ֆինանսական ակտիվների առկայությունը ապահովում է ժողովրդագրական իրավիճակներից կուտակային համակարգի անկախությունը, նվազեցնում է դրա կախվածությունը կառավարության գործողություններից՝ այդպիսով փոքրացնելով քաղաքական ռիսկերից կենսաթոշակառուների խոցելիությունը:

18. ՀՀ կենսաթոշակային համակարգի արդեն իսկ ձևավորված օրենսդրական դաշտի վերլուծության արդյունքում պարզվեց, որ ժամանակակից փուլում հանրապետությունում պետական կենսաթոշակային համակարգը զուգակցելու է ինչպես բաշխողական, այնպես և կուտակային տարրեր: ՀՀ կենսաթոշակային համակարգի բաշխողական և կուտակային տարրերի համազոյակցություն կլինի, լավագույն դեպքում, մի քանի տասնյակ տարի՝ նույնիսկ այն ժամանակ, երբ 1974 թվականին ծնվածները հասնեն թոշակային տարիքի, այսինքն՝ 2037 թվականից հետո: Դա բացատրվում է նրանով, որ պարտադիր կուտակային բաղադրիչի պարտադիր մասնակիցները մինչև 2014 թվականը միջոցները հատկացնելու են ՀՀ պետական բյուջե բաշխողական համակարգով: Հետևաբար՝ կուտակային հատկացումներին նախորդած տարիների համար նրանք իրավունք ունեն պահանջելու փոխհատուցել այդ տարիների համար չկուտակված միջոցների դրամական եկամուտները: Այսպիսով՝ բնակչության կենսաթոշակային ապահովության կուտակային համակարգը «մաքուր տեսքով» կգործի ներկա դարաշրջանի կեսերից ոչ շուտ:

Ելնելով վերոշարադրյալից՝ կարելի է ՀՀ կենսաթոշակային համակարգի զարգացումը պայմանակնորեն տրոհել երկու փուլի: Առաջին փուլը կենսաթոշակային համակարգի բաշխողական (հին) և կուտակային (նոր ծնվող) տարրերի համատեղ գոյությունն է:

Երկրորդ փուլը (մեր դարաշրջանի 2-րդ կեսը) կուտակային կենսաթոշակային համակարգի համատարած կիրառությունն է:

19. Այդ տեսանկյունից կատարված հետազոտությունները թույլ տվեցին հանգել այն եզրակացության, որ լուրջ հիմնախնդիրներ կարող են ծագել անցման շրջանում, այսինքն՝ մոտ ապագայում՝ ՀՀ կենսաթոշակային համակարգի զարգացման առաջին փուլում: Դա բացատրվում է այն հանգամանքով, որ հետագա մի քանի տասնյակ տարիներին բաշխողական համակարգի գոյությունը, որը նախորդ երկու տասնամյակում ցույց է տվել իր անկատարությունը, անխուսափելի դարձնելով ՀՀ կենսաթոշակային համակարգի բարեփոխումները, կխոչընդոտի կենսաթոշակառուների դրամական եկամուտների կտրուկ բարձրացմանը: Ըստ այդմ՝ առաջարկվում է տվյալ հիմնախնդրի լուծման երկու տարբերակ:

**Առաջին՝** պասիվ, որը ենթադրում է այդ բնագավառում գործող օրենսդրության պահպանում և կենսաթոշակների բարձրացում ՀՀ պետական բյուջեի եկամտային մասի աճի ու այդ նպատակով բյուջեի ծախսային մասի հատկացումների հնարավորության չափերին համապատասխան: Այնպես որ տարբերակը այնքան էլ վստահելի չէ, քանի որ ենթադրում է պետական բյուջեի եկամուտների առավել արագ աճ: Դրան կարելի է հասնել հարկերի հավաքագրմամբ՝ արմատական փոփոխություններ կատարելով վարչարարության բնագավառում, այսինքն՝ էքստենսիվ ճանապարհով (որն ունի իր սահմանները), երկրորդ՝ ինտենսիվ ուղիով, այսինքն՝ ի հաշիվ ՀՀ տնտեսական զարգացման առավել բարձր աճի տեմպերի ապահովման:

**Երկրորդ՝** ակտիվ, որը ենթադրում է պասիվ տարբերակի երկու ուղիների օգտագործման հետ միասին ՀՀ կենսաթոշակային համակարգի օրենսդրական բազայի փոփոխությունների իրականացում: Այդ փոփոխությունները հիմնականում կապված են կենսաթոշակային միջոցների ձևավորման աղբյուրների և չափերի հետ:

Համաձայն «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի, որը գործողության մեջ է դրվելու 2014 թվականին, պարտադիր կուտակային բաղադրիչին պարտադիր կարգով մասնակիցների համար վճարները կուտակվում են նրանց բազային եկամտի 10% դրույքաչափով: Շնորհիվ, մասնակիցները միջին չափով վճարում են բազային եկամտի 5%-ի չափով, իսկ մնացած 5%-ը մասնակիցների համար վճարվում է պետական բյուջեից: Իսկ «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վարձու աշխատողների սոցիալական վճարի չափը, կախված աշխատավարձի և դրան հավասարեցված եկամուտների ամսական չափից, կազմում է 3% և 8%, այսինքն, միջին հաշվով՝ 5%:

Հետևաբար՝ պարտադիր կուտակային բաղադրիչի ձևավորման աղբյուրը ոչ թե պետական բյուջեն է, այլ մասնակիցների կողմից պետական բյուջե ուղղվող միջոցները, որոնք, որոշ իմաստով, «կվերադառնան» նրանց՝ որպես պարտադիր կուտակային բաղադրիչ:

Հեղինակի կարծիքով այս խնդիրը չի լուծվի մաքուր «եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի՝ 2013 թվականին ուժի մեջ մտնելուց հետո:

Սակայն կարևոր է ոչ թե դա, այլ այն հանգամանքը, որ, սկսած 2014 թվականից, յուրաքանչյուր տարի մեծ չափով կաճեն պարտադիր կուտակային բաղադրիչի ձևավորմանն ուղղվող պետական բյուջեից կատարվող ծախսերը:

Փաստորեն, պարտադիր կուտակային բաղադրիչի մասնակիցները չեն մասնակցի այն կենսաթոշակառուների համար միջոցների ձևավորմանը, ովքեր վճարվում են բաշխողական համակարգով, այն դեպքում, երբ նրանց կենսաթոշակները մինչև 2014 թվականը աշխատանքային ստաժի համար կվճարվեն ըստ այդ համակարգի: Մյուս կողմից՝ դա կհանգեցնի սերունդների համերաշխության սկզբունքի խախտմանը, երբ առավել երիտասարդ սերունդները կենսաթոշակ են «վաաստակում» առավել տարիքով սերունդների համար:

20. Կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրմանը զուգահեռ, բաշխողական համակարգի ժամանակավոր գոյատևման հետ մեկտեղ, պետական բյուջե ուղղվող միջոցները յուրաքանչյուր տարի կնվազեն: Սակայն ՀՀ պետական բյուջեն նման ծանր բեռ կրել չի կարող, և դա ձեռք կբերվի մինչև 1974 թվականը ծնված կենսաթոշակառուների թոշակների միջին չափի հաշվին: Արդյունքում սա պատճառ կդառնա մինչև 1974 թվականը և դրանից հետո ծնված բնակչության դրամական եկամուտների կտրուկ շերտավորման:

Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածում կատարել փոփոխություն: Այդ փոփոխությունը վերաբերում է պարտադիր կուտակային բաղադրիչին պարտադիր կարգով մասնակիցների համար պետական բյուջեից 0%-ից մինչև 5% հատկացումների՝ ըստ տարիների պրոգրեսիվ սանդղակի սահմանմանը:

Դա թույլ կտա մի կողմից՝ տնտեսել պետական բյուջեի միջոցները, որոնք կարող են լրացուցիչ ուղղվել մինչև 1974 թվականը ծնվածների բաշխողական կենսաթոշակների բարձրացմանը, մյուս կողմից՝ կրճատել 1974 թվականից հետո ծնվածների կուտակային կենսաթոշակից դրանց տարբերությունը:

*Ատենախոսության հիմնական դրույթները հրապարակվել են հեղինակի հետևյալ աշխատություններում.*

1. Հասարակական աշխատանքի արտադրողականության աճի խթանման մի քանի հարցեր. – ՀՍՍՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի և ԵԺՏԻ-ի կողմից համատեղ կազմակերպված՝ երիտասարդ գիտնականների և մասնագետների գիտաժողով («Հասարակական արտադրության արդյունավետության բարձրացման արդի խնդիրները ՍՄԿԿ 27-րդ համագումարի որոշումների լույսով»), Եր., 1987, էջ 92-94:
2. Некоторые теоретические вопросы оплаты труда при социализме – 9-ая научная сессия профессорско-преподавательского состава и аспирантов ЕрИИХ («Совершенствование хозяйственного механизма и ускорение научно-технического прогресса»). Ер., 1988, стр.29-31.
3. Բաշխման հարաբերությունները լրիվ տնտեսական հաշվարկի պայմաններում. – Հայաստանի ժողովրդական տնտեսություն, Եր., 1988, թիվ 8, էջ 58-64:
4. Вопросы о законах, регулирующих распределительные отношения при социализме. – ԵԺՏԻ-ի արոՖեսորադասախոսական անձնակազմի և ասպիրանտների գիտական 10-րդ նստաշրջան («Հայաստանի Հանրապետության տնտեսական ինքնուրույնություն. մեթոդաբանությունը և կադրային ապահովումը»), Եր., 1990, էջ 20-22:
5. Արտադրական հարաբերությունների վերարտադրական կառուցվածքը և բաշխման հարաբերությունները. – Հայաստանի ժողովրդական տնտեսություն, Եր., 1990, թիվ 3, էջ 33-37:
6. Բնակչության եկամուտների բաշխման տեսությունը տնտեսագիտական մտքի ակունքներում. – Բանբեր ՀԴՏՀ-ի, Եր., 2011, թիվ 1(22), էջ 22-39:
7. Государственное регулирование доходов населения в Армении. – Вестник РИИХ, Ростов-на-Дону, 2011, №3(35), стр. 13-18.
8. Тенденции проявления ненаблюдаемой экономики в Армении. – Механизм регулирования экономики, Суми, 2011, №3(52), Том 2, стр. 157-161.
9. Рыночные реформы и уровень бедности населения в Армении.– Евразийский экономический обзор, Астана, 2011, №4, стр. 57-60.
10. Механизм влияния функций заработной платы на денежные доходы населения РА.– Материалы международной научной конференции («Современные проблемы инновационного развития Республики Армения и Российской Федерации»), Ереван –Ростов-на-Дону, 2011,стр. 493-495.
11. Развитие малого бизнеса в Армении. – Материалы международной научно-практической конференции («Актуальные вопросы управления социально-экономическими системами в условиях модернизации»), Саратов, 2011, стр. 174-177.
12. Международная трудовая миграция и сокращение бедности населения Армении. – Материалы III международной научно-практической конференции («Достойный труд – основа стабильного общества»), Екатеринбург, 2011, стр. 131-135.
13. Կյանքի որակի դիալեկտիկայի տեսական ասպեկտները. – Հայաստան. Ֆինանսներ և էկոնոմիկա, Եր., 2011, թիվ 10(136), էջ 69-73:
14. «Կենսամակարդակ» հասկացության շուրջ.–Հայաստան. Ֆինանսներ և էկոնոմիկա, Եր., 2011, թիվ 10(136), էջ 73-77:
15. Շուկայական բարեփոխումները և բնակչության դրամական եկամուտների «բեռնացումը» ՀՀ-ում. – Հայաստան. Ֆինանսներ և էկոնոմիկա, Եր., 2011, թիվ 12(138), էջ 65-68:
16. Необходимость территориальной сбалансированности экономики Армении.– Проблемы развития внешнеэкономических связей и привлечения иностранных инвестиций: региональный аспект., Часть I. сборник научных трудов – Донецк, 2012, стр. 371-373.
17. ՀՀ բնակչության դրամական եկամուտների կարգավորման հիմնախնդիրները (մեծագրություն).– Հեղինակային հրատարակություն, Եր., 2012, «Մեկնարկ» ՍՊԸ, 272 էջ:

**Торосян Арцруни Ерджаникович**  
**Проблемы регулирования денежных доходов населения РА**

Автореферат диссертации на соискание ученой степени доктора экономических наук по специальностям 08.00.01 „Теоретическая экономика” и 08.00.02 „Экономика, управление хозяйством и его отраслями”.

Защита диссертации состоится 11 апреля 2013 г. в 14<sup>00</sup> на заседании специализированного совета 014 ВАК РА по экономике, действующего в Армянском государственном экономическом университете, по адресу: 0025, г. Ереван, ул. Налбандяна 128.

**Р Е З Ю М Е**

В условиях коренных социально-экономических преобразований в Республике Армения первостепенное значение приобретают проблемы повышения уровня жизни населения. В условиях рыночной экономики уровень жизни, в первую очередь, определяется уровнем денежных доходов населения.

К сожалению, за последние два десятилетия перехода экономики РА к рынку, произошла крайняя поляризация денежных доходов населения, чем и предопределяется актуальность данного исследования.

Основные результаты исследования могут быть использованы правительством РА при разработке социально-экономической политики страны. Отдельные положения могут найти применение при реформировании пенсионной системы в республике.

Цель диссертационной работы – раскрыть причины столь глубокой дифференциации денежных доходов населения и разработать пути ее регулирования в рамках совершенствования социально-экономической политики в целом.

Значимость исследования заключается в том, что в результате исследования предложена альтернативная концепция регулирования денежных доходов населения, исходящая из социально-экономического положения республики. При этом получен целый ряд научных результатов, из которых научной новизной являются следующие:

- оценка структуры денежных доходов домашних хозяйств РА по децильным группам позволила сделать вывод о том, что за изучаемый период времени наблюдается „уход” 10% наименее обеспеченных слоев населения в теньевую экономику и теньевую оплату труда;
- на основе выявления различных признаков дифференциации денежных доходов населения РА, обоснована первоочередность ее по видам экономической деятельности, чем и обусловлена территориальная дифференциация доходов;
- на основе оценки динамики предоставляемых социальных гарантий государства и линий бедности за отдельные периоды времени, выявлено, что основной удар мирового финансово-экономического кризиса пришел на бедные слои населения республики, в результате чего удельный вес крайне бедных и бедных в 2009-2010гг. увеличился;

- обосновано наличие также двух признаков, препятствующих дальнейшему развитию малого бизнеса в РА – это неравномерное распределение малого бизнеса в территориальном аспекте и низкий уровень эффективности использования здесь трудовых ресурсов;
- предложен метод косвенной макроэкономической оценки ненаблюдаемой экономики;
- основываясь на обследованиях НСС РА относительно неформальной занятости, обосновано наличие здесь теневой оплаты труда;
- обоснована необходимость повышения роли государства в регулировании миграции рабочей силы, рассматривая его в качестве важного звена экономического развития РА;
- раскрывая важнейшую роль пенсий в ослаблении дифференциации денежных доходов населения, предлагается два сценария перехода от распределительной системы к накопительной – пассивный и активный;
- обосновывая отрицательные последствия внедряемой пенсионной системы, связанные с возможной резкой дифференциацией денежных доходов населения, которые родились до и после 1974 г., предложено применять для обязательной накопительной части прогрессивно, растущую по годам шкалу отчислений из государственного бюджета от 0% до 5%.

**Torosyan Artsruni Yerdganik**  
**Issues of regulation of monetary revenues of the RA population**

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of Sciences in the specialties 08.00.01 "Theoretical Economics" and 08.00.02 "Economics, Management of Economy and its Branches".

The defense of the thesis will take place on April 11, 2013 at 14<sup>00</sup> o'clock at 014 Council of Economics at Armenian State University of Economics: 128 Nalbandyan street, Yerevan 0025.

**A B S T R A C T**

Under the conditions of socio-economic reforms in the RA, the issues of advancement of living standard of the population gain initial attention. In terms of market economy, living standard, firstly, is defined by the level of monetary revenues of the population.

Unfortunately, during the last two decades, transition of economy of the RA into market economy, an extreme polarity of monetary revenues of population took place, which laid the foundations for the implementation of this research.

The main results of the research can be used by the government in the course of elaboration of the socio-economic policy of the country. Certain considerations may be implemented for the reforms in the sphere of pension system in the republic.

The aim of the dissertation is to reveal the reasons for the deep differentiation of monetary revenues of the population and elaboration of the ways of its regulation in the scope of improvement of socio-economic policy as a whole.

The significance of the research is that as a result of the implemented research, an alternative concept for regulating monetary revenues of the population is proposed, which emerges from the socio-economic conditions of the republic. Together with this, an entire line of scientific results is achieved, to mention the following as scientific novelties:

- the evaluation of structure of monetary revenues of households in the RA by decile groups made it possible to conclude that during the research period, we have observed a 10% "withdrawal" of less prosperous layers of society to the shadow economy or shadow labor payments;
- based on revelation of different characteristics of differentiation of monetary revenues of the RA population, the first priority is justified by the types of economic activity, which also specifies the territorial differentiation of revenues;
- based on the evaluation of dynamics of assignable social guarantees of the state and poverty index for different time periods, it is revealed that the main target of world financial crisis were the poor layers of the population of the republic, which resulted in the increase of unit weight of the extremely poor and the poor in 2009-2010;
- the existence of two more peculiarities is justified, which hinder the further development of small business in the RA – this is the uneven distribution of small business in the territorial aspect and low level of efficiency of labor resource utilization;

- the method of indirect economic evaluation of unobservable economy is proposed;
- based on the observations of the RA NSS on unofficial employment the existence of shadow labor payment is grounded;
- the necessity for increasing the role of the government is justified as the regulation of labor force migration, while investigating it as an important chain of economic development of the RA;
- by revealing the important role of pensions in weakening the differentiation of monetary revenues of the population, two scenarios are proposed for the transition from distributive to cumulative system – passive and active;
- by justifying the negative consequences of introducing the pension system, connected with the possible sharp differentiation of monetary revenues of the population, who were born before and after 1974, it is proposed to implement for the compulsory cumulative part a progressively, year by year, increasing scale of contributions made from the state budget starting from 0 up to 5%.

A handwritten signature in black ink, appearing to be 'M. M. M.', written in a cursive style.